2009, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (307)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

6 դեկտեմբերի

### Արաբական Միացյալ Էմիրությունների արտաքին գործոց պետնախարարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արաբական Միացյալ Էմիրությունների արտաքին գործերի պետնախարար Անվար Մուհամմեդ Գարգաշին՝ ուղեկցությամբ ԱՄԷ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վահագն Մելիքյանի:

Ողջունելով հյուրին՝ Նորին Սրբությունն իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնեց այն հոգածության ու բարի վերաբերմունքի համար, որ Էմիրությունների իշխանությունները ցուցաբերում են տեղի հայ համայնքի հանդեպ, ինչն ապացույց է երկու ժողովուրդների միջեւ բարեկամության, երկու կրոնների միջեւ դրական երկխոսության ու խաղաղ համակեցության:

Պետնախարար Գարգաշն իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ հանդիպման համար՝ ներկայացնելով Հայաստան իր այցի նպատակն ու անելիքները:

Հանդիպման ավարտին հյուրերը եղան Մայր Աթոռի թանգարաններում:

11 դեկտեմբերի

### Լատվիայի Հանրապետության նախագահին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լատվիայի Հանրապետության նախագահ Վալդիս Զադլերսին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Ողջունելով Վալդիս Զադլերսին՝ Վեհափառ Հայրապետը ներկայացրեց հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ առհասարակ Հայ Առաքելական Սբ Եկեղեցու ունեցած դերն ու նշանակությունը, անցած պատմական ուղին: Անդրադառնալով երկու երկրների ժողովուրդների բարեկամությանը՝ Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց Լատվիայի իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերած հոգածության համար: «Ուրախ ենք, որ մեր ժողովրդի զավակները Ձեր երկրում ամբողջովին վայելում են պետության ընձեռած հնարավորությունները եւ կարող են ապրել հոգեւոր ու ազգային կյանքով: Այսօր Լատվիայում կան հայկական եկեղեցի, կիրակնօրյա հայկական դպրոց, որը հույս ունենք դարձնել ամենօրյա: Մեր երախտագիտությունը, բարեմաղթանքներն ու օրհնությունն ենք բերում Ձեզ ու Ձեր երկրին՝ աղոթելով, որ հետայսու եւս ապրեք խաղաղ ու բարօր կյանքով»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Լատվիայի նախագահն իր հերթին նշեց, որ հայ ժողովրդի զավակները, լինելով Լատվիայի օրինավոր քաղաքացիներ, իրենց ներդրումն են բերում երկրի զարգացմանը: Նախագահը կարեւորեց նաեւ Եկեղեցու դերակատարությունը ներկայիս հասարակական, քաղաքական ու սոցիալական կյանքում:

Այցի ավարտին Լատվիայի նախագահն ու նրան ուղեկից պատվիրակությունը եղան Մայր տաճարում, Վեհարանի թանգարանում:

15 դեկտեմբերի

### Սլովակիայի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Սլովակիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Յոզեֆ Միգաշին (նստավայրը՝ Մոսկվա):

Վեհափառ Հայրապետը, ողջունելով Հայաստանում Սլովակիայի առաջին դեսպանին, հույս հայտնեց, որ նրա պաշտոնավարության ընթացքում սերտ համագործակցություն կհաստատվի երկու երկրների միջեւ, կզարգանան ու կամրապնդվեն երկու ժողովուրդների բարեկամական կապերը: Իր խոսքում Վեհափառ Հայրապետը շնորհակալությամբ ընդգծեց նաեւ Սլովակիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ երկու ժողովուրդների հոգեւոր կյանքին, Եկեղեցիների կարեւոր դերակատարությանը՝ հասարակության մեջ ինչպես բարոյական, այնպես էլ հոգեւոր արժեքների ամրապնդման գործում:

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

## ՆԵՐԲՈՂ

### Ասված Քրիստոսի Ծննդյանը

Սքանչելի է ծնունդը Քո, Աստծո՛ Որդի, եւ դժվարին է բերանիս համար՝ նվաստ լեզվով խոսելու մեծ խորհրդի մասին:

Բարձր է Քո հայտնությունը բոլոր բանականներից, եւ անհնարին է իմ տկարությանը՝ խոսելու Քո ծննդյան մասին:

Ամբողջ աշխարհը չի կարող ճառել Քո փառքի մասին, Տե՛ր, եւ այժմ ես՝ տկարս, ինչպե՞ս համարձակվեմ պատմել Քո մասին:

Միայն Քո Հայրը գիտի Քո ծննդյան որպիսությունը, հողն ու մոխիրը ինչպե՞ս պիտի խոսի Քո մասին:



Իբրեւ մարդ՝ Քո հայտնությունը ծածուկ է նաեւ Քո մորից, եւ այժմ ո՞վ կբարձրանա դեպի Քո աստվածային ծնունդը:

Ոչ ոք հասու չէ Քեզ, այլ միայն Քո Հայրը, իսկ ես ինչպե՞ս երկարեցնեմ իմ լեզուն դեպի Քո գաղտնիքները:

Անծանոթ է Քո խորհուրդը նաեւ հրեշտակներին, ես ինչպիսի՞ խոսքով ընծայեմ Քեզ պտուղը սակավ խոսքերիս:

Քո կառքին լծված քերովբեները երբեք չիմացան Քո տեղը, եւ այժմ ո՞ր կողմ պիտի ընթանա իմ միտքը՝ պատմելու Քո մասին:

Ո՞ւր ճանաչեմ Քեզ, որ ծածուկում ես, եւ կամ ինչպե՞ս ճառեմ Քո մասին, երբ անիմանալի է Քո խորհուրդը:

Ո՞ր երկիր թռցնեմ իմ զգայարանները՝ որսալու Քեզ, եւ կամ ո՞ր սահմաններին նայեմ՝ տեսնելու Անտեսանելիիդ:



Որքա՞ն պիտի բարձրանա միտքը՝ Անտեսանելիիդ գտնելու համար, եւ կամ ո՞ր շավղով պիտի ընթանա խոսքը՝ պատմելու Անպատմելիիդ մասին:

Որտե՞ղ ես գտնվում. քերովբեական կառքո՞ւմ, թե՞ Մարիամի մոտ. Քո ծնունդի՞, թե՞ Հովսեփի մոտ՝ Հրեաստան երկրում. հայրական ծոցո՞ւմ, թե՞ Մարիամի հարկերում. հողեղեն արգանդո՞ւմ, թե՞ շափյուղա աթոռին. հրեղեն թեւերի վրա՞, թե՞ Քո տալիթա մոր բազուկներին. քերովբեների ուսերի վրա՞ ես, որ տեսնեմ Քեզ այնտեղ, թե՞ սրբուհու գրկում է բնակվում Մեծությունդ. լուսատուների մե՞ջ է Քո պայծառությունը, թե՞ խանձարուրում ես պատված եւ աղքատապես մսուրում դրված: Էությամբ բնակվում ես այնտե՞ղ, ուր չի հասնում զվարթունների իմաստությունը, թե՞ կերակրվում ես նվաստ ստինքներով՝ իբրեւ մանուկ. կառքերի սոսկալի շարժմամբ օրհնաբանվո՞ւմ ես, թե՞ Քեզ հաճելի են աղքատ մորդ գգվանքները. հրեղեն երեքսրբյան լեզուներով սրբաբանվո՞ւմ ես, թե՞ գովվում ես կուսական սուրբ բերանով. բանական անիվների վրա ճոխանո՞ւմ ես, թե՞ Դավթի դստեր ձեռքով շոշափվում. հրեղեն կառքի մեջ անմարմին երիվարներով բարձրանո՞ւմ ես, թե՞ խոնարհվում աղքատի դստեր գրկում. պետություններից վեր՝ երկնային անծանոթ խորաններո՞ւմ ես ուրախանում, թե՞ քարահատակ ժայռի մեջ է իջել Քո մեծությունը. սերովբեները բարձրաձայն սրբասացությո՞ւն են վերառաքում Քեզ, թե՞ ճշմարտապես կուսական կաթն է սնում Քեզ: Արդ, որտե՞ղ նայեմ՝ փնտրելու Քեզ, որ ամեն բանում ես. Եփրաթայի Բեթղեհեմում, երկնքում ու երկրի բոլոր ծագերում:

Շարունակությունը՝ էջ 2

# Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Դեկտեմբերի 13-ին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցված պատարագի ընթացքում, ձեռամբ Տ. Վրթանես եպս Աբրահամյանի, քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 12 միաբան սարկավագ: Վրթանես սրբազանը սուրբ մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը՝ շնորհելով հոգեւոր նոր անուններ. Վաղինակ սրկ. Հովհաննիսյանը վերակոչվեց Տ. Վազգեն, Աշոտ սրկ. Սահակյանը՝ Տ. Հմայակ, Արմեն սրկ. Գեւորգյանը՝ Տ. Նաիրի, Արթուր սրկ. Ղազարյանը՝ Տ. Վիգեն, Սայադ սրկ. Պապայանը՝ Տ. Երվանդ, Արմեն սրկ. Նազարյանը՝ Տ. Եղիշե, Էդգար սրկ. Մազմանյանը՝ Տ. Զոհրաբ, Ստեփան սրկ. Շախկյանը՝ Տ. Դավիթ, Արամ սրկ. Ծատուրյանը՝ Տ. Անանիա, Արտակ սրկ. Նուրիջանյանը՝ Տ. Միքայել, Սամվել սրկ. Սաֆարյանը՝ Տ. Աշոտ, Արման սրկ. Գրիգորյանը՝ Տ. Հակոբ:

Այնուհետեւ ձեռնադրող սրբազան հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ հորդորելով նորընծա քահանաներին նվիրվածությամբ եւ նախանձախնդրությամբ ծառայել իրենց կոչմանը, մայր եկեղեցուն ու հայրենիքին:

Նույն օրը՝ երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց նաեւ նորընծա քահանաների վեղարի տվչության արարողություն: Տ. Հակոբ, Տ. Անանիա, Տ. Հմայակ կուսակրոն քահանաները վեղար ստացան՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

# Վերաօծվեց Ախալքալաքի շրջանի Դիլիսկա գյուղի Սբ Սարգիս եկեղեցին



Դեկտեմբերի 9-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս Միրզախանյանի եւ մասնակցությամբ Սամցխե - Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանի, վերաօծվեց Ախալքալաքի շրջանի Դիլիսկա գյուղի Սբ Սարգիս եկեղեցին:

Դիլիսկան բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից եւ Ջավախքի այն սակավաթիվ գյուղերից է, որը 1830 թվականին՝ Կարնո հայտնի գաղթի ժամանակ, ուներ տեղաբնիկ հայ բնակչություն: Վերաբնակիչ հայերը տեղափոխվել են Կարնո գավառի Կրճնկոց Գեղախոռ եւԴվնիկ գյուղերից: 1837 թվականին գյուղում հիմնվել է խալֆայական կարգի առաջին դպրոցը, ավելի ուշ՝ նաեւ եկեղեցական-ծխական դպրոց: Սբ Սարգիս եկեղեցին հիմնվել է 1830-ականներին: Եկեղեցու պատերին ներքուստ ագուցված են ԺԵ-ԺԶ դարերի արձանագիր խաչքարեր:

Արարողությանը մասնակցում էին հյուրեր ինչպես Վրաստանի տարբեր շրջաններից, այնպես էլ Հայաստանից: Ներկա էին Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Հրաչ Սիլվանյանը, Ախալքալաքի շրջանից Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հարություն Հովհաննիսյանը եւ ուրիշներ: Վերաօծման հանդիսությանը մասնակցում էին նաեւ Ախալքալաքի շրջանային իշխանության ներկայացուցիչները: Մատուցվեց անդրանիկ պատարագ: Արարողության վերջում եկեղեցու բակում կատարվեցին ավանդական մատաղօրհնեք եւ ժողովրդական տոնախմբություն:

Եկեղեցին վերականգնվել եւ տարածքը բարեկարգվել է ծնունդով Դիլիսկայից, այժմ Ռուսաստանի Դաշնությունում ապրող Սամվել Նահատակյանի բարերարությամբ:

*Վիրահայոց թեմի մամլո դիվան*

# Աբովյանի Սբ Հովհաննես նորակառույց եկեղեցու գմբեթների եւ խաչերի օծումը

Դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ Աբովյանի Սբ Հովհաննես նորակառույց եկեղեցու հինգ գմբեթների, խաչերի օծման արարողությունը՝ ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպս Քարամյանի եւ մասնակցությամբ թեմի հոգեւոր դասի:

Սրբազան հայրն իր օրհնությունը բերեց ներկաներին, ինչպես նաեւ գոհունակություն հայտնեց նորակառույց եկեղեցու բարերար՝ ԱԺ պատգամավոր տիար Գագիկ Ծառուկյանին: Օծմանը ներկա էին Աբովյանի քաղաքապետ պարոն Գուլյանը, քաղաքային եւ մարզային իշխանությունների ներկայացուցիչներ:

*Կոտայքի թեմի լրատվական բաժին*

# Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարի քարտուղարության նիստը Աստանայում

Դեկտեմբերի 2-3-ը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում տեղի ունեցավ Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարի քարտուղարության IX նիստը: Քարտուղարության այս նիստը կոչված էր քննարկելու հուլիս ամսին տեղի ունեցած համաշխարհային եւ ավանդական կրոնների III համագումարի արդյունքները, ինչպես նաեւ՝ 2012 թվականին կայանալիք առաջնորդների IV համագումարի նախապատրաստական աշխատանքները: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս նիստին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացրեց համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարի քարտուղարության անդամ՝ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպս Հովհաննիսյանը:

# Ղրիմի Սբ Խաչ եկեղեցին կշարունակի մնալ Հայ Առաքելական Սբ Եկեղեցու Ուկրաինայի հայոց թեմի իշխանության ներքո

Ղրիմի Ինքնավար Հանրապետության Գերագույն Ռադայի նախագահ Անատոլի Գրիցենկոն, ի պատասխան Ղրիմի Սբ Խաչ եկեղեցու առնչությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հղած գրության, հեռախոսազրույց է ունեցել Նորին Սրբության հետ: Գրիցենկոն հավաստիացրել է Վեհափառ Հայրապետին, որ Ղրիմի Սբ Խաչ եկեղեցու կարգավիճակում որեւէ փոփոխություն չի լինելու: Սբ Խաչ եկեղեցին շարունակելու է գտնվել Ուկրաինայի հայոց թեմի իշխանության ներքո՝ որպես հոգեւոր-եկեղեցական նշանակության կառույց:

Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ Ուկրաինայի հայոց թեմում արդեն իսկ հոգեւոր սպասավորության է կոչվել Տ. Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը, ով թեմակալ առաջնորդի իշխանության ներքո իր ծառայությունն է բերելու՝ իբրեւ Ղրիմի առաջնորդական փոխանորդ եւ Սբ Խաչ վանքի վանահայր:



# ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

## ՆԵՐԲՈՂ...

*Սկիզբը՝ էջ 1*

Հաղթվեցի, Տե՛ր, քանզի սքանչելի ես, Քո ճառը՝ հարուստ, իսկ ես՝ տկար, եւ իմ լեզուն՝ աղքատ. ինչպե՞ս կարող է պատմել Քո մասին: Սուրբ է ամբողջովին Քո կոչումը, եւ իմ մտքերը՝ խռնված. լույս են Քո խորհուրդները, իսկ իմ իմանալի աչքերը խիստ խավար են եւ չեն կարող տեսնել Քեզ:

Արդ, եթե լռությունն ընտրեմ, վատթար գայթակղություն կլինի, որովհետեւ ծուլություն կծնի, իսկ համարձակվելն ու ասելը մեծ երկյուղ է. գուցե չկարողանամ: Նեղված եմ երկուսի մեջտեղում. ի՞նչ անեմ:

Քեզ կտամ խոսքիս քնարը. շարժի՛ր մատներդ եւ Հոգուդ շնորհներով արթնացրո՛ւ խոսքերս՝ հոգեւոր մեղեդիներով պատմելու Քո փառքի մասին:

Ես՝ փող, եւ Քո շնորհները՝ խոսք. Դո՛ւ ազդիր իմ մեջ, որպեսզի Քեզնով երգեմ Քոնը: Մտքերս Քո զորությամբ թող բխեցնեն Քո մասին պատմությունները, եւ Քո պարգեւներով թող երգեմ Քո ծննդյան փառքը: Առաջին ծնունդն անճառելի է նաեւ հրեղենների համար, արժանացրո՛ւ ինձ՝ փառաբանելու երկրորդը, որ եղավ Կույսից: Նրան չեն համարձակվում մերձենալ իմ մտքերը, սրան Քո սիրով մոտենում եմ՝ խոսելու: Այն անճառելի է նաեւ հոգեղեն լեզուներին, սրան փափագում է իմ բերանը՝ ասելու, որովհետեւ շնորհով է: Մշտնջենավորը չեն իշխում քննել եւ սերովբեները, իսկ սրան, որ այսօր եղավ, մերձեցան նաեւ հովիվները: Թե ինչպես եղավ առաջինը, միայն Հայրը գիտի, իսկ այսօրվանի մասին հնչեց ամբողջ աշխարհում: Այն հեռու է նաեւ երկնավոր դասերից, սա մոտ է նաեւ արեւելքի մոգերին:



*Լուվր, 15-րդ դար*

Առաջինն անծանոթ է քերովբեներին, մոտ է երկրորդը, քանզի ողորմություն հեղեց մեզ վրա: Եվ եթե սա ստուգապես հայտնի չէ քննողներին, ապա առաջինն ո՞վ կհամարձակվի պատմել: Անհնարին է քննել ե՛ւ հայրականը, ե՛ւ կուսականը, քանի որ զարմանքը նույնն է եւ անպատմելի: Առաջին ծնունդը վեր է ժամանակներից, ծածուկ է ամենքից նաեւ վերջինը. ծածկված է կուսական կնիքի տակ: Առաջինի մասին ո՛չ ասելու եւ ո՛չ խորհելու տեղ կա, բայց այս երկրորդի հրաշքը նաեւ դպիրներին է ապշեցնում: Եվ արդ, լռեմ հեռավորի մասին, որ չի պատմվի, եւ գամ դեպի մոտականն, որ չի բացատրվի:

Եվ արդ, անարժանությանս պատճառով մի՛ արհամարհիր ինձ, քանզի փափագում եմ, եւ անկարողությանս պատճառով մի՛ անարգիր ինձ, քանզի փառաբանում եմ: Նայեցի իմ կամքին, Տե՛ր, թե ինչպես է պատրաստ Քո փառքին, որպեսզի լեզուս ունայնությամբ չպարծենա՝ Քո մասին պատմելիս: Եվ եթե ճառիս պսակը գեղեցկադիր չէ, ինձնից չէ [այն], քանզի բոլոր պատվական ակները, որ առա Քեզնից, ընդելուզեցի նրա վրա: Եվ եթե խոսքերիս կարգը հաճելի չէ, Դու ես շնորհել, եւ Քո մեծ խորհուրդը չի փոքրանա իմ նվաստ բերանում: Եթե թոթովախոս մեկը աղճատի թագավորի անունը, մի՞թե հախուռն խոսքերից կփոքրանա թագավորի անունը: Այդպես էլ եթե տգետը ճառի Աստվածության մասին պատմությունը, Աստվածությունը չի վնասվի նրա տգիտությունից:

*Շարունակությունը՝ էջ 3*

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՍՏԵՓԱՆՈՍ Ե ՍԱԼՄԱՍՏԵՑԻ (1545-1567)

*Սկիզբը՝ թիվ 22*

Ստեփանոս կաթողիկոսի բացակայության շրջանում, որը, փաստորեն, երեք տարի տեւեց, կաթողիկոսական գործերը վարում էր Միքայել Սեբաստացին՝ ապագա Միքայել Ա Սեբաստացի կաթողիկոսը: Հիշենք, որ նա այդ շրջանում աթոռակից կաթողիկոս էր: Միքայելը փոխարինում էր, եւ ոչ մի հիմք չկա կարծելու, որ Ստեփանոսը հրաժարվել էր կաթողիկոսությունից եւ նոր միայն մեկնել Եվրոպա: Տեղապահ եւ աթոռակից Միքայել կաթողիկոսի գործունեության վերաբերյալ նույնպես հիշատակներ չկան: Ժամանակները խիստ անհանգիստ էին եւ վտանգավոր: Սեֆյան շահ Թահմազն ասպատակում էր Օսմանյան կայսրության մաս կազմող Արեւմտյան Հայաստանը, իր հերթին օսմանյան սուլթան Սուլեյմանը հունգարական պատերազմներից հետո արշավեց Սեֆյան Պարսկաստանի դեմ եւ ավերեց ու կողոպտեց Երեւանի, Նախիջեւանի երկրամասերը եւ Արցախը: Արշավանքի հետեւանքները սարսափելի էին: Բարեբախտաբար շուտով՝ 1555 թվին, կնքվեց Ամասիայի հաշտությունը: Ըստ որում, վիճակը մեղմացավ, եւ տեւական խաղաղություն հաստատվեց:

1557 թվին եւս երկու աթոռակից ընտրվեց՝ Տեր Բարսեղը եւ Տեր Գրիգորը: Առաքել Դավրիժեցին հիշում է չորս կաթողիկոսի՝ Ստեփանոսին, Միքայելին (Աշ. Հովհաննիսյանը կարծում է, որ Էջմիածնում հիշատակված Ստեփանոսը մեկ այլ կաթողիկոս է, որի՛ եւ ոչ թե Ստեփանոս Ե Սալմաստեցու աթոռակիցն է եղել Միքայել Ա-ն) եւ այս նոր երկուսին: Մ. Օրմանյանը հակված է կարծելու, որ Բարսեղը եւ Գրիգորը, հավանաբար, էջմիածնեցիներ էին: Շատ հնարավոր է, որ նոր կաթողիկոսների ընտրությունը, թերեւս, պայմանավորված էր ոչ միայն արտաքին հանգամանքներով, այլեւ Էջմիածնի միաբանության մեջ տիրող ներքին խլրտումներով:

Ղ. Ալիշանը հակված է տեսնելու եւս մեկ կաթողիկոսի՝ Արիստակես անունով, սակայն դա հաստատող փաստեր չկան, իսկ Առաքել Դավրիժեցին հիշում է միայն չորսի եւ ոչ թե հինգի մասին:

Որոշակի հայտնի չէ Ստեփանոսի գահակալության տեւողությունը, եթե, իհարկե, նա չի մահացել դեռ Լեհաստանում: Մ. Օրմանյանը, հիմնվելով Դավրիժեցու հաղորդման վրա, 1567 թվից կաթողիկոս է համարում Միքայել Ա Սեբաստացուն: Ստացվում է, որ Ստեփանոսը հովվապետել է մինչեւ 1567 թիվը: Ղ. Ալիշանը մի կապակցությամբ նրա մահը դնում է 1551 կամ 1552 թվին՝ Էջմիածնում, երբ նա այնտեղ գտնվել չէր կարող, եթե անգամ Լեհաստանում մահացած չլիներ: Իսկ մեկ այլ կապակցությամբ նրան կենդանի է հայտարարում 1564 թվին: Նման եզրակացության համար նրան հիմք է ծառայել Կաֆայում գտնված մի հիշատակարան: Կամենիցի հիշատակարանի համաձայն՝ Ստեփանոսը կենդանի էր գոնե 1566 թվի սեպտեմբերին: Սա միանգամայն համահունչ է Առաքել Դավրիժեցու տեղեկությանը: Սակայն այս տեղեկությունն անհարիր է Միքայել Ա Սեբաստացի կաթողիկոսի՝ 1562 թվին խորհրդաժողով գումարելու եւ Աբգար Եվդոկացուն Հռոմ ուղարկելու փաստին, ինչը մտածել է տալիս, որ Միքայել Ա-ն գոնե 1562 թվին կաթողիկոս էր:





Հենվելով հիշյալ փաստերի վրա՝ Մ. Օրմանյանը կարծում է, որ Միքայել Ա Սեբաստացու գահակալությունը պետք է դնել 1567-ից: Հավանաբար նա ներքին գժտությունների կամ արտաքին հալածանքների պատճառով ստիպված էր եղել թողնել Էջմիածինը եւ հաստատվել հայրենի Սեբաստիայում: Չի բացառվում, որ դա արվել էր կաթողիկոսի հրահանգով եւ որոշակի նպատակներով: Ստեփանոսն էլ մեծացել էր, տկարացել եւ ստիպված էր եղել գործերը հանձնել իր էջմիածինցի աթոռակիցներին:

Միքայել Ա-ն հզոր անձնավորություն էր եւ կարողացավ Գանձասարի ու Աղթամարի կաթողիկոսությունների հավակնությունները զսպել: Դրանով նա պաշտպանում էր Մայր Աթոռի իրավասությունները: Գանձասարի կաթողիկոսը, որ կոչվում էր նաեւ Աղվանից, փորձել էր իր ենթակայության տակ առնել Նախիջեւանը, Գեղարքունին, Ղափանը, Աղստեւը եւ Լոռին, իսկ Աղթամարի կաթողիկոսությունը փորձել էր յուրացնել Խոյի, Սալմաստի, Վանի, Ամիդի, Արճեշի, Խլաթի, Մուշի եւ Բաղեշի թեմերը: Միքայել Ա Սեբաստացին դրան հասնում է պարսից շահ Թահմազից ստացած հրովարտակի միջոցով, որի համաձայն՝ Պարտավը, Գանձակը, Աղստեւը, Լոռին, Զակամը, Նախիջեւանը, Գեղարքունին, Ղափանը, Խոյը եւ Սալմաստը համարվում էին Էջմիածնի վիճակներ: Հրավարտակի արձակման թվականը հայտնի չէ: Պատերազմական գործողությունների հետեւանքով առաջացած անկայուն վիճակը համարձակություն էր տվել Գանձասարի եւ Աղթամարի կաթողիկոսություններին, որոնք փորձել էին ընդլայնել իրենց ենթակա վիճակները: Թե ո՞վ էր այդ ժամանակ Գանձասարի կամ Աղվանից կաթողիկոսը, հայտնի չէ, սակայն Աղթամարում աթոռակալում էր Գրիգոր Սեֆեդինյանը, որը հայտնի էր նաեւ Փոքր մականունով՝ իր երիտասարդության պատճառով: Նա հաջորդել էր Գրիգորիս Աղթամարցի երգաբանին, որը շատ նշանավոր էր եղել: Այդ ժամանակ Կիլիկիայի կաթողիկոսն էր Հովհաննես Թլկուրանցին, որը նույնպես աչքի ընկավ իր գործունեությամբ:

Թե երբ եկավ Միքայել Ա-ն Սեբաստիա, պատմությունը չի արձանագրել: Սակայն1562 թվին նրա մեծ ձեռնարկումը՝ Սեբաստիայի 1562 թվականի խորհրդաժողովի հրավիրումը, անմահացրեց նրա անունը Հայոց պատմության մեջ: Միանգամայն հավանական է, որ նա տեղափոխվել էր Սեբաստիա՝ կաթողիկոսի հրահանգով եւ որոշակի ազգային ծրագրով: Սեբաստիայում նա կապեր է հաստատում Աբգար Եվդոկացի անունը կրող անձնավորության հետ, որն Ամիր բեկի որդին էր եւ սովորաբար հայտնի էր Սաֆար կամ Սեֆեր անունով: Միքայելը նրա մեջ տեսավ իր ծրագրերի իրագործման համար ամենահարմար անձնավորությանը: Նա հարուստ էր եւ շնորհալի: Նրա որդին՝ Սուլթանշահը, որի մասին հայտնում է, որ նա սերում էր թագավոր Սենեքերիմ Արծրունու տոհմից: Սուլթանշահը տալիս է նաեւ ճյուղագրություն, որի մանրամասների մեջ մտնելն անհարմար ենք համարում, լոկ նշենք, որ այդ ճյուղագրությունը հաստատել է Միքայել Ա Սեբաստացին՝ գումարելով ժողով՝ բազմաթիվ եպիսկոպոսների, երեցների եւ աշխարհիկների մասնակցությամբ:

Ճյուղագրությունը հաստատողների մեջ հիշվում են Երուսաղեմի պատրիարք Անդրեասը, Սբ Հռիփսիմեի, Սբ Աննայի, Այրիվանքի, Սբ Առաքելոց վանահայրերը, Պիծառի, Ամասիայի, Անկյուրիայի, Երուսաղեմի եւ մի քանի այլ եպիսկոպոսներ: Մասնակցել են նաեւ մեծ թվով վարդապետներ, քահանաներ եւ աշխարհիկ հարուստ մարդիկ: Բայց, եթե հաշվի առնենք մասնակիցների ցուցակի անկանոնությունը, ինչպես նաեւ Երուսաղեմի պատրիարքի Սեբաստիայում չգտնվելը, կարելի է ենթադրել, որ նորմալ ժողով չի հրավիրվել, եւ լոկ Աբգարը նորանոր անձանց ստորագրություններ է հավաքել՝ ճյուղագրության հաստատման համար: Աբգարին թագավորական ծագում վերագրելն ունեցել է հեռուն գնացող՝ ամենից առաջ Եվրոպայի հետ բանակցություններում օգտագործելու նպատակ:

*Շարունակությունը՝ էջ 5*

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՆԵՐԲՈՂ...

*Սկիզբը՝ էջ 2*

Այժմ ես այս դաշինքով եմ մոտենում Քեզ, Տե՛ր, ոչ թե սահմանելու Քո պատմությունը, այլ իմ բառերով հայտնելու իմ սրտի իղձարությունը:

Փոքրիշատե կասեմ այն շնորհների մասին, որ տրվեցին Ադամին: Քանի որ Տերը իջավ՝ նորոգելու Իր ընկած ու կործանված պատկերը, իմ խոսքերով կհյուսեմ գովելի պսակ եւ կմատուցեմ Նրան, Ով մեր փրկության համար հաճեց ծնվել Կույսից:

Արքայական թագ կպատրաստեմ եւ կմատուցեմ արքաների Արքային, Ով խոնարհվեց Իր մեծությունից եւ իջավ աղքատների հարկի տակ: Կվերցնեմ խոսքիս պտուղը եւ կմտնեմ Նրա առջեւ, Ով հագել էր անճառելի լույսը, բայց հանձն առավ մարմին հագնել Դավթի դուստրից: Իմ խոսքերի պատարագները երկրպագությամբ կմատուցեմ Քահանայապետին, Ով եկավ՝ Պատարագ լինելու մեղավորներիս համար: Իմ լռման ընտրողապես կգցեմ քաջ Հովվապետի սեղանին, Ով Իր Հորից եկավ՝ լինելու Գառ: Կկրկնեմ իմ խոսքերը իմաստասիրաբար՝ պատմելու Բան Աստծո մասին, Ով անփոփոխելի մարմին եղավ եւ բնակվեց մեր մեջ:

*Շարունակելի*

***Գրաբարից փոխադրեց***
***Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ***

# ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ



Նոյեմբերի 24-27-ը Կալկաթայի Մաքսիմ Գորկու անվան ռուսական մշակույթի պալատում ընթանում էին 2009 թվականի երիտասարդների միջազգային օրվան նվիրված «Մշակույթների համադրում մեկ աշխարհում» եռօրյա համերգային, գեղարվեստական-մշակութային հանդիսություններ, որին մասնակցում էին աշխարհի տասնյակ երկրներից եկած երիտասարդներ եւ ուսանողներ՝ ներկայացնելով իրենց ազգային մշակույթն ու արվեստը՝ հանուն աշխարհի խաղաղության: Հանդիսություններին մասնակցում էին ներկայացուցիչներ Բանգլադեշից, Չինաստանից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Հնդկաստանից, Ինդոնեզիայից, Իտալիայից, Ճապոնիայից, Լիտվայից, Նիգերիայից, Ռումինիայից, Ռուսաստանից, Շրի Լանկայից, Թուրքիայից եւ Ուզբեկստանից:

Նոյեմբերի 24-ին «Աշխարհի երաժշտության հնչյունները» համերգային ծրագրին Հայաստանի Հանրապետությունը ներկայացրեց Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի երգչախումբը: Խմբավար Անժելա Մանուկյանի գլխավորությամբ՝ երգչախումբը հանդես եկավ Կոմիտասի, Տ. Մանսուրյանի եւ Ռ. Ամիրխանյանի երգերի հիասքանչ կատարումներով՝ հոգեկան մեծ բավականություն պարգեւելով հանդիսականներին: Թեեւ միջազգային ներկայացուցիչների միջեւ մրցակցություն չկար, սակայն հոտնկայս ունկնդիրների ծափահարություններն ու գովեստի բարձր արտահայտությունները բավական էին՝ տեսնելու համար ներկաների հիացմունքը հայ արվեստի եւ երաժշտության հանդեպ:

# ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ



**3.**

*Սկիզբը՝ թիվ 19-22*

Այս «Грузин» կոչվածը, միացած «Скальпель» կեղծանվան տակ թաքնված հոդվածագրին, մեր ծանրագույն ողբերգության պահին «Закавказская речь» թերթում «տգետ» ու «տգեղ» մի քաղաքական աղմուկ էին բարձրացրել եւ այնքան նենգ ու աչառու, որ հայտարարում էին, թե Կովկասի բնիկ ժողովուրդները վրացիներն ու թուրքերն են, իսկ հայերին, իբր թե, անցյալում իրենց հետ Կովկաս են բերել ռուսները, իսկ հիմա էլ նույն ռուսներն այլ քաղաքականություն են վարում՝ ջանալով հայ գաղթականների քարավաններով սահմանափակել տեղաբնիկ վրացիների ու թուրքերի կենսական հնարավորությունները՝ նրանց վարելահողերը տրամադրելով հայ գաղթականներին:

«Մի երկու վկայություն» հոդվածում Հովհ. Թումանյանի՝ պատմագիրների ու ժամանակագիրների երկերից վերցրած անհերքելի փաստերի վրա հիմնված պատասխանը, կարելի է խոստովանել, այնքան էլ մեղմ չէ: Նա վկայակոչում է հենց վրացական ու մահմեդական սկզբնաղբյուրներ, այդ թվում եւ Վախթանգ Վեցերորդ թագավորի պատմագիր որդու՝ արքայազն Վախուշտի «Վրաստանի աշխարհագրություն» գիրքը՝ Մ. Ջավախիշվիլու ռուսերեն թարգմանությամբ, եւ նրանից վերցրած վկայություններով է պաշտպանում հայության իրավունքները: Իսկ արքայազն Վախուշտը ոչ միայն աշխարհագրական հստակ սահմաններն է գծել՝ ցույց տալով Հայաստանի եւ Վրաստանի բնական բաժանարարները, այլեւ մատնանշել է վարչական բաժանումերում ապրած բնակչության ազգային կազմը: Ըստ Վախուշտի տվյալների՝ ոչ միայն Սոմխեթի Հայաստանը, ոչ միայն Տաշիրն ու Ղարաբաղը, Արոցը, այսինքն՝ Տաշիրից հյուսիս-արեւմուտք՝ մինչեւ Ախալքալաք ընկած շրջաններն են հայաբնակ, այլեւ Դումանիսի շրջանում էլ, ուր վրացիներն են գերակշռել, այնքան հայ է ապրել, որ Լոռի-Տաշիրի հայությունը ենթակա է եղել Դումանիսի հովվությանը:

Թուրքերին թվելիս նա մատնանշում է Քռի ափին Շահ-Աբասի բնակեցրած բորչալու եւ ղազախ եկվոր ցեղերին, որոնց անուններով էլ կոչվել են նրանց զբաղեցրած տարածքները: Իսկ ռուսների Կովկաս գալուց առաջ, այսինքն՝ մինչեւ 1802 թվականը, նույն Վախուշտի տվյալներով, Տփղիս քաղաքն ուներ բնակչության այսպիսի ազգային կազմ. «Թիֆլիսի մասին խոսելիս ասում է՝ բերդի ու Սեյդաբադի բնակիչները մահմեդական են: ***Բերդից դուրս գլխավորապես հայեր են եւ սակավաթիվ էլ վրացիներ***» (ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Իսկ ռուսների գալուց հետո, այսինքն՝ 1802 թ. մայիսի 8-ին, երբ կազմվեց Վրացական բարձրագույն կառավարությունը, եւ նրա մեջ արդեն ներառվել էին սահմանակից Լոռին ու Փամբակը, ձեւավորվեց վարչական հինգ շրջան. 1) Լոռու շրջան, որի մեջ մտնում էին Մցխեթից մինչեւ Բորչալու ընկած տարածքը, Թիֆլիս քաղաքը, Բորչալուն, Ղազախը, Շամշադինը, Լոռին ու Փամբակը, 2) Գորու շրջան, 3) Դուշեթի շրջան, 4) Թելավի շրջան, 5) Սղնախի շրջան: Բոլոր այս վարչական տարածքներում հայերը, ըստ աղբյուրների, ոչ մի շրջանում վերջինը չեն. որոշ բնակավայրերում՝ հատկապես Ջավախքում, Թիֆլիսում, Լոռիում, Փամբակում եւ այլուր նրանք գերազանցում են բոլորին, նույնիսկ վրացիներին, բայց այդ հինգ շրջաններում ընդհանուր հաշվեկշռով հայերը վրացիներից հետո երկրորդն են եւ առաջ են մահմեդականներից, օսերից, փշավներից, հրեաներից, խեւսուրներից, թուշերից եւ մյուսներից: Եվ սա կատարվել է ոչ թե հայերի ցանկությամբ կամ ռուսների քաղաքականությամբ, այլ տարբեր պատճառներով, որոնց մեջ ո՛չ հայերն են մեղավոր, ո՛չ ռուսները, այլ պատմական հանգամանքները եւ հենց վրացական պետական քաղաքականությունը. «Բայց ես հերիք չէ, որ էսքան հայ կար Վրաստանում՝ վրաց արքայազն Իովանն էլ, հենց նույն 1802 թվականի հուլիսի 24-ին դիմում է Կովկասի կառավարչապետ գեներալ Կրոնինգին եւ նրա միջոցով բարձրագույն թույլտվություն է խնդրում, որ ***Վրաստանի սահմանակից երկրներից հարեւան ժողովուրդներին, նրանց հետ նաեւ հայերին գրավի ու գաղթեցնի, ներս բերի Վրաստան - Քարթալինա ու Կախեթ եւ բնակեցնի ազատ հողերի վրա, որտեւ նրանք կիավանեն***» (ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Այս պարագայում Հովհ. Թումանյանն առնվազն բարոյական իրավունք ուներ հայերին ոչ միայն Վրաստանում, այլեւ Կովկասում մի «երրորդ ժողովուրդ» համարող վրացի ազգայնամոլներին կշտամբելու՝ երկկողմանի տգիտության համար. մի կողմից նրանք տգետ էին՝ իրենց իսկ պատմությունը չիմանալով, մյուս կողմից՝ նոր իրականությունը չգիտեին եւ չէին էլ ուզում հասկանալ, որ հայ գաղթականությունն ամենեւին էլ հոժարակամ չի լքել իր հայրենիքը, ընդհակառակը նրան բռնի արտաքսել են իր երկրից: Նրանք տեղյակ էլ չէին, թե հայ նոր գրականությունը, մամուլը ինչ քարոզչություն էին ծավալել հայ մարդուն իր հայրենիքում պահելու եւ հայրենի հողի վրա ամրացնելու եւ բոլոր գաղթականներին դեպի հայրենիք, դեպի Հայաստան նպատակամղելու համար նույնիսկ այն դեպքում, երբ այդ վերադարձի ճանապարհին անգամ նրան սպասում էին մահմեդական ավազակ կողոպտիչներ ու մորթողներ:

Կարելի է առանձնացնել թումանյանական ողջամտությանը բնորոշ երկու դաս՝ ուղղված այդ միտումնավոր կեղծարարներին. առաջին՝ «Ես կարծում եմ՝ մի մարդ, որ ստորագրում է Грузин՝ Վրացի, եւ էսքան կրքոտ կերպով հետաքրքրվում է էս տեսակ խնդիրներով, ամենաքիչը պետք է ծանոթ լիներ էս աղբյուրներին, իր ազգային նշանավոր պատմագիրների ու ժամանակագիրների տեղեկություններին», եւ երկրորդ՝ «Էլ ի՞նչ եք ուզում:

*Շարունակությունը՝ էջ 6*

**Գարեգին վրդ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ (1840-1892)**



# ՔԵՇԵ ՊՈԼՈ
## Մի մարտի իրական պատմություն

Մեր Փոկչի շուրջ 1820 թվականին Բաղեշին մոտ Ոսիլ Ղրան ավանում նստում էր մի քուրդ դերվիշ՝ Նաբի անունով: Նրա համբավն ու ազդեցությունը տարածվել էր Հայաստանի ու Քուրդիստանի բոլոր գավառներում, իսկ Ոսիլ Ղրանը քրդական կամ, ավելի ճիշտ, կորդվական բռնակալությունների մի կենտրոն էր: Այս Նաբին՝ իբրեւ դենպետ ու պետերի պետ, իշխում էր իր շուրջ եղող հավասարապես բոլոր մեծամեծների ու բռնակալների մտքի ու բազուկների վրա, խորհուրդ ու հրաման էր տալիս նրանց եւ ինչ որ քանդում էր՝ քանդում էր եւ ինչ շինում՝ շինում:

Գլխին քող գցած էր ելնում շրջելու գյուղերում, ավաններում ու շեներում՝ երեսն անտեսանելի պահելով «անհավատ» քրիստոնյաների ու մեղավոր մահմեդականների՝ անարժան անձանց աչքերից: Ուր եւ հասնում էին նրա ոտքերը, ամբոխը, հույժ խռնված, կուտակված, ընթանում էր հետեւից՝ տեսնելու նրա հետքերը, մերձենալու ու մեծ երկյուղով համբուրելու նրա ձեռքերը, ոտքերն ու հագուստի փեշերը կամ լիզելու գարշապարների փոշին, խմելու եւ այն ջուրը, որով նա լվացվել էր կամ լվացվելու նրանով: Սա քարոզում էր ոչ մահմեդականների դեմ հալածանք, եւ սա էր նրա խոսքերի ու ուսմունքի գլուխը. «Կա՛մ պետք է բոլոր մարդկանց մեր կրոնին փոխել, կա՛մ արեգակի ներքո բոլոր գտնվողներին ոչնչացնել»:

Եվ քանի որ բոլոր նրան լսողները նրա խոսքն իբրեւ պատգամ էին ընդունում, նրան զորավիգ եղան մերձակա բոլոր բռնակալները եւ որոշեցին հավատքի հրոսակային արշավանք ու ասպատակ կազմակերպել՝ հարձակվելով ոչ մահմեդականների վրա: Նաբիին աշակերտելով՝ հրոսակների այս գնդերն առավել բազմաթիվ ու արի դարձան, եւ հազարավոր բռնավոր զինվորներն ամենքը՝ սրերով զինված ու հավատքով բոցավառված, հեծյալ ու հետեւակ, մոտ 36 հազար մարդ էին՝ Բոհտան ամիրայի ու Միր Մեհեմմեդ մեծ իշխանի (որ բոլոր բռնակալներից ամենից ավագն էր) զորքերով հանդերձ:

Այն ժամանակ Սղերդում ու Ռնդվանում, քուրդ իշխաններից ու շեյխերից անկախ, նստում էր մի եզդի իշխան՝ Միրզըք անունով, որ մարդասիրաբար խնամում էր իր իշխանության ներքո գտնվող բոլոր հայերին, ասորիներին ու եզդիներին: Միրզըքն արի էր ու բարի կամք ուներ: Ուստի եւ շատերը, փախչելով այլ բռնակալների անտանելի լծից, ապաստանում էին Միրզըքի երկրում, ապրում խաղաղության մեջ եւ ազատ պաշտում յուրաքանչյուրն իր կրոնը: Այսպես բազմացավ ու ամրացավ գավառների բնակչությունը՝ ի սփոփանս պատսպարվածների եւ ի փուշ շրջակայքի տիրողների:

Նաբին եւ յուրայինները խորհրդակցելով՝ հրաման արձակեցին նախ հարձակվել Սղերդ քաղաքի ու Ռնդվան ավանի վրա, նախ կոտորել այնտեղ գտնվողներին, կոտրել-նվաճել Միրզըքի զորությունը, որպեսզի այնուհետեւ դյուրին լիներ տիրել մնացած բոլորին: Ահ գցելով նրանց վրա՝ ասաց. «Ինքնակամ պետք է գան կա՛մ մեր հավատքին, կա՛մ իրենց մահվանը»:

Իբրեւ գարնան օրերին զայրացած գետեր, այդպես հորդան տալով՝ քրդական բանակն ավարառությամբ, հրաձգությամբ ու սպանությամբ առաջ էր գնում: Սա տեսնելով՝ Միրզըքը եւ հայերի ու եզդիների մեծամեծները հավաքվեցին, միաբանվեցին՝ ահավոր ու անխուսափելի կորստական վտանգի դեմն առնելու հնար գտնելու: Երբ զարհուրած, ապշած, տարակուսած՝ ինչ անելը չգիտեին, ամենքի աչքերը դարձան նայելու հայերի ավագերեց քահանա տեր Պողոսին, ով գավառում նշանավոր էր խոսքով, ինչքով ու արիությամբ եւ խորհրդական, օգնական ու սիրելի էր Միրզըքին: Քրդախոս հայերն ու եզդիները անվանում էին նրան Քեշե Պոլե: Սա առաջ գալով կանգնեց սարսափահար ատյանում, բացատրեց նրանց՝ ասելով. «Այս կռիվը սովորական՝ մարմնավոր փառքի, իշխանության կամ վրեժի համար չէ՛, այլ մեր ազատության դեմ են գալիս՝ խլելու մեզնից մեր հավատքը: Եվ քանի որ եթե խույս տանք, կսատակվենք, եթե դիմադրենք, կմեռնենք, բայց նաեւ կմեռցնենք եւ քաջի անուն կժառանգենք, ուրեմն անհապաղ դե՛մ դուրս եկեք՝ դեպի ճակա՛տ, եւ մեր կանայք ու մանուկները թող խոսքով քաջալերեն մեզ եւ մեզանից վերցնեն հաղթելու եւ փրկվելու քաջության կամ կռվելու եւ մեռնելու օրինակը: Ահա ես ձեր ամենքից առաջ եմ գնում»:

Տեր Պողոսի խոսքերից ազդված ու ոգեւորված՝ Միրզըքն ու ատյանի բոլոր մեծամեծները (մանավանդ վստահ՝ բազմահաղթ տղամարդու վրա, որի կորովության փորձը բազմիցս առել էին նախապես), երկյուղից սթափվելով, տեղներից ոստնեցին, զենք վերցնելով՝ կազմ ու պատրաստ կանգնեցին:

Ձայնեցին հայերի տեր Պողոսն ու եզդիների Միրզըքը, շուտով գումարվեց մոտ 10 հազար հոգի: Միրզըքը քարոզել տվեց պահք պահել ու աղոթել, Աստծուն օգնության կանչել եւ հրամայեց իր ինչքերից ու ստացվածքներից ողորմություն բաշխել բազում կարոտյալների. նույնպես վարվեցին նաեւ ովքեր ունեւոր էին: Աստծո վրա հուսալով հանդերձ՝ դիմեց նաեւ հմայությունների ու գուշակների, ովքեր հաջողության նշան ցույց տվեցին նրան: Այնուհետեւ խրախուսելով իր սակավամարդ բանակին՝ առաջ խաղաց դեպի Սղերդ քաղաք՝ զորքը բաժանելով երկուսի՝ հայերի ու եզդիների: Հայերի զորագլուխ կարգեց տեր Պողոսին, իսկ եզդիներինն ինքն էր՝ Միրզըքը: Հայերն առհասարակ հետեւակ էին, հրացանակիր, սուսերակիր ու ասպարավոր, իսկ եզդիները՝ մեծավ մասամբ հեծյալ ու տիգավոր:

Այնտեղ, ուր հանդիպեցին երկու կողմերի հակառակորդների ճակատները, Միրզըքն ու տեր Պողոսը դարձան դեպի իրենց գնդերն ու ասացին. «Պատրա՛ստ կանգնեք ու մեր հետեւից դիտեցե՛ք, ահա մենք արշավում ենք դեպի թշնամիները. եթե Աստված մեզ հաջողություն տվեց, ողջ հետ կդառնանք ձեզ մոտ՝ ի քաջալերություն բերելով հաղթության նշան, իսկ եթե մեռնենք, այնժամ դուք ամենքդ, միահամուռ հարձակվելով, ցո՛ւյց տվեք ձեր տիրասիրությունը, ազատասիրությունը՝ արիաբար մահը հանձն առնելով: Սակայն մեռնելիս ձեզնից յուրաքանչյուրի փոխարեն նրանցից հազարի՛ մեռցրեք եւ այդպե՛ս կնքեք ձեր վախճանն ու մեր վրեժը»:

Սա ասելով՝ ողջունեցին զորքին, եւ սրանք լալով ու արտասուք թափելով՝ թողեցին նրանց գնալ:

Ինչպես առյուծը որսի ժամանակ եւ իբրեւ արագաթռիչ արծիվ՝ շուտով այն վայրն ընթացան, խոյացան Միրզըքն ու տեր Պողոսը, հասան, հարձակվեցին ու քրդերի զորքի մեջ ընկան եղեգները խանձող կրակի նման, ամպրոպի պես փոթորկելով՝ աջ ու ձախ զարկեցին, լափեցին, թավալեցին, նիզակաքաղ արեցին ստվար բանակը, ընտիր-ընտիրների սատակեցրին եւ երկու ականավոր քաջերի գլուխները կտրելով՝ նիզակի վրա ցցած՝ բերեցին իրենց բանակը: Իսկույն ցնծության աղաղակ բարձրացավ զորքի մեջ, եւ յուրաքանչյուր մարդ, հաղթության հույսով լի վառվելով, վազում էր հարվածելու թշնամուն, որ ատելությամբ եռալով ու վրեժխնդրությամբ բորբոքված՝ հարձակվում, վրա էր գալիս:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՏԱԹԵՎԻ ՏԱԹԵՎԱՃՈՒՆՉ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



*Սկիզբը՝ թիվ 22*

Ինչպես Օրբելյանի պատմության հետեւողությամբ ժողովուրդն է պատմում, հարձակման ենթարկված Շահանդուխտը, չկամենալով իրեն գերեվարել ցանկացողների ձեռքն ընկնել, ձիով թռել է այդ ժայռի գագաթից ու անվնաս կանգնել Որոտան գետի ափին: Այսպիսի հրաշքով ազատվելուց հետո նա այլեւս չի ցանկացել հարսնանալ, այդ լեռան լանջին կառուցել է հիշյալ մատուռը եւ այնտեղ ճգնել, իսկ իր կալվածքները նվիրել է Տաթեւի վանքին եւ աղքատներին:



Լեոն էլ, դարձյալ ժողովրդից լսելով, գրում է. «Օրիորդը այստեղ եկեղեցի է շինում, որ այժմ էլ կա, ինչպես պատմում են, եւ մինչեւ իր կյանքի վերջը ճգնում է այդտեղ: Իր կալվածքների կեսը բաշխում է կարոտյալներին, իսկ կեսը՝ Շնհեր գյուղի ձորից մինչեւ Գինական գետը, նվիրում է Տաթեւի վանքին»:

Լեոն, այս հին ավանդության արդիական մի նոր շունչ հաղորդելով եւ հարաբերելով իր ապրած ժամանակի բարքերի հետ, ինչպես նաեւ ցանկանալով ընթերցողների սրտում վերարծարծել Սյունյաց հերոսուհու առաքինի եւ քաջարի նկարագիրը, գրում է. «Այդ ժայռը, այո, մի անխորտակելի արձան է, որ անհանգիստ Որոտանի վրա գցված վկա է հայ օրիորդի դյուցազնական առաքինության մասին, մի օրիորդի, որ այսպիսի մի գործով հռչակել է, թե ինչ է եղել հայ կինը այն բռնության դարերում, երբ սրբություն, օրենք ու սեփականություն բոլորովին անհայտ բաներ էին: Բայց ինչո՞ւ հարսի ժայռը փակվել է այս ձորի խորության մեջ: Ինչո՞ւ նա չի բարձրանում, երկինք հասնում, այնքան բարձր կանգնում, որ ամեն տեղից տեսնեին նրան մեր այժմյան թեթեւամիտ ու օտարամոլ օրիորդները, տեսնեին եւ կարմրեին նրանք, որ փառքի եւ անմիտ պաճուճանքի գերի դառած, ոչ միայն չեն հիշում իրենց նախնիքներին, այլեւ ամոթ, ցածրություն են համարում իրենց մայրենի լեզվով խոսել, կարծես մի Շահանդուխտ բավական բարձր, բավական պանծալի չէ, որ նրա գործածած լեզուն այժմ էլ հպարտությամբ գործածեինք: Շահանդուխտ... գեղեցիկ, սիրելի անուն: Սյունյաց երկրի պատմությունը երկու այդպիսի սիրելի անուններ ունի իր մեջ պահած. մեկն այս Շահանդուխտն է, մյուսը՝ Բաղաց թագուհի Շահանդուխտը, որ Տաթեւի վանքին մեծագին ընծաներ է նվիրել»:

Պատահական չէ, որ թե՛ Տաթեւ անվան ստուգաբանության եւ թե՛ Շահանդուխտի պատմության մեջ իշխում է թռիչքի, շրջապատող աշխարհից ու միջավայրից վեր բարձրանալու խորհուրդը: Տաթեւը ինքը տրամադրում է նման մտավոր սլացքի եւ ճախրանքի, որի յուրօրինակ մի արտահայտությունն է նաեւ Տաթեւի հռչակավոր Գավազան-սյունը, որը մեր գրականության մեջ հայտնի է «Գավազան զորության եւ արդարության» անվամբ:

Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ երբ կառուցվում է Տաթեւի վանքի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին (906 թ.), նրա առջեւ կանգնեցվում է Սուրբ Երրորդությանը նվիրված այս սյունը:

Հայկական ճարտարապետության պատմության մեջ հայտնի են մի շարք նման հուշարձան-սյուներ. Օձունի կոթողը, Թումանյան գյուղի կոթողը, որը կառուցվել է 7-րդ դարում եւ այժմյան պահպանված վիճակով 3,5 մետր է: Սյունը պսակող խաչն ընկել եւ ավերվել է, եւ կամ էլ Օշականի զվարթնոցանման խոյակով սյունը, որի վրայի խաչը վերստին ընկել է: Օշականի սյունն անվանվում է Մորիկ կայսեր մոր սյուն, քանի որ ասվում է, որ Մորիկի մայրը հայ է եղել եւ Օշական գյուղից, ու այս սյունն ի հիշատակ կայսեր մորն է կանգնեցվել:

Համանման այս սյուներից Տաթեւի սյունը, սակայն, տարբերվում է չորս հատկանիշով:

**ա.** Տաթեւի սյունը նման սյուների մեջ ամենաբարձրն է՝ 7,89 մետր:

**բ.** Այն միակն է, որ չի ավերվել եւ ավարտվում է սյունը պսակող ծակոտկեն խաչով: Շնորհիվ խաչի նման հորինվածքի՝ արեւի ճառագայթները թափանցում են խաչի միջով եւ լուսեղեն գծագրմամբ գծում խաչի պատկերը, եւ թվում է, թե խաչը ճախրում է երկնային լույսի մեջ:

**գ.** Այս սյուների մեջ միակ ճոճվողն է:

**դ.** Միայն այս սյունն է, որ անվանվում է Գավազան-սյուն:

Մյուս սյուների, որոնք չեն ճոճվել, վերեւում գտնվող քարե խաչն ու խոյակը երկրաշարժի ուժեղ ցնցումներից ալիքային մեծ տատանում են ստացել եւ գտնվելով անշարժ սյան վերեւում՝ ալիքային այդ ցնցումից ընկել են իրենց անշարժ կետից:

Տաթեւի սյունը, սակայն, ստորերկրյա ցնցման կամ անգամ մարդկային ձեռքի հպումից սկսել է շարժվել, այսինքն՝ ճոճվել ու երերալ, եւ նայած ճնշման ու ցնցման ուժին, միաժամանակ տատանվելուց՝ ճոճվելուց հետո իր ելակետային սկզբնական դիրքին եկել: Շնորհիվ այս հատկության է, որ այն դիմացել է տարբեր երկրաշարժերի ավերիչ հարվածներին: Համաձայն ավանդության՝ սյան հիմքում սնդիկ է լցված եւ ճնշման ժամանակ այն «լողում է» սնդիկի գնդի մեջ եւ աստիճանական ճոճմամբ իր նախկին վիճակին գալիս:

Սյան ճարտարապետը նման զարմանալի արդյունքի կարողացել է հասնել՝ սյան վեր ելնելուն զուգընթաց նրա մակերեսի միջին խտությունը գցելով, այսինքն՝ սյունը որքան վեր է բարձրանում իր խարսխից, այնքան շարվածքի քարերի խտությունը, եւ ըստ այդմ՝ ծանրությունը, ընկնում է, որը թեթեւություն է հաղորդում սյան վերին մասին:

Ցավոք, սյան ճոճվելու առանցքը եւ ճնշման հանդեպ զգայունակությունը խախտվել է 1931 թ. երկրաշարժից հետո: Մինչ այդ, համաձայն ականատեսների վկայության, եթե սյունը ճոճվում էր, երբ նրան կից շինության տանիքից անգամ ձեռքով հրում էին, ապա այդ երկրաշարժից հետո այն արդեն անհամեմատ փոքր շառավղով է ճոճվում եւ այն էլ՝ մեծ ուժ գործադրելուց հետո:

Տաթեւի սյան այսպես ճոճվելուն եւս մի հոգեւոր խորհուրդ է հաղորդվել, եւ տարբեր ավանդություններ են հյուսվել սյան ճոճվելու մասին: Այս ավանդությունների միջոցով է նաեւ պարզ դառնում, թե ինչու է այս սյունը անվանվել Գավազան-սյուն:

*Շարունակությունը՝ էջ 7*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՍՏԵՓԱՆՈՍ Ե ՍԱԼՄԱՍՏԵՑԻ (1545-1567)

*Սկիզբը՝ էջ 3*

Միքայել կաթողիկոսը 1562 թվին Սեբաստիայում խորհրդաժողով հրավիրեց, որի նպատակը կրկին Եվրոպայի հետ հարաբերություններ հաստատելն էր՝ Հայաստանն օտարերկրյա տիրապետություններից ազատագրելու հեռանկարով: Նույն թվականի մայիսի 20-ին նա երկու հանձնարարականներ է տալիս Աբգարին՝ ուղղված Հռոմի պապին (Պիոս Դ)՝ ընծայաբերելով մյուռոն, ոսկի խաչ, օրհնված մատանի, սբ Թեոդորոսի մասունքները եւ հայաբնակ վայրերի ու եկեղեցիների մի ցուցակ:

Աբգարը մեկնում է Եվրոպա իր որդու՝ Սուլթանշահի եւ Ալեքսանդր քահանայի ընկերակցությամբ: Որպես հին հարաբերությունների վկայություն՝ նրանք իրենց հետ վերցնում են «Դաշանց թղթի» մի օրինակ: Կաթողիկոսը խնդրում է, որ դրա պարունակությունը վերահաստատվի. Աբգարը պետք է Հռոմ մեկներ Կիպրոսի եւ Վենետիկի վրայով: Վենետիկը ոչ միայն քաղաքական, այլեւ տպագրության ձեռնարկի կենտրոնը պետք է հանդիսանար: Ինչ վերաբերում է Հռոմին, ապա այն իր հավանությամբ պիտի արտոներ Վենետիկին եւ բոլոր լատիններին՝ օգնելու հայերին՝ հաստատելով նրանց ճշմարիտ քրիստոնյա լինելը: Ցավոք սրտի, այս ուղեւորության մանրամասները չեն պահպանվել:



Հայտնի է, որ Սեբաստիայից Էջմիածին գնացած Միքայելը 1563 թվի ապրիլի 1-ին նոր նամակ է գրում Հռոմի պապին՝ փորձելով լուր ստանալ իր պատվիրակների մասին: Նամակում նաեւ ասվում էր, Աբգարը երկու ձեռքով հաջողակ է եւ ձախն անգամ օգտագործում է իբրեւ աջ ձեռք, եւ որ ոչ միայն տաճիկներից, այսինքն՝ թուրքերից, այլեւ չարամիտ քրիստոնյաներից վախենալով՝ նա նորահնար նշանագրերով է գրել նամակները, որոնք կարող է միայն Աբգարը կարդալ: Աներկբա է, որ այս նամակի մեջտեղ գալը պայմանավորված էր պատվիրակներից լուր չունենալով:

Հռոմեադավան հայերը փորձում են ամեն կերպ ցույց տալ, որ պատվիրակության Եվրոպա գնալը պայմանավորված է եղել Հռոմի հետ կրոնական միբանություն հաստատելու խնդրով: Իրականում հայերի մտքում այդպիսի ծրագիր չկար: Նպատակն Արեւմուտքից ռազմական օժանդակություն ստանալն էր, որի համար հույսեր էին փայփայում: Այդ պատճառով նրանք ձեւ արեցին, թե պատրաստ են հաղորդակցվել եւ անգամ միաբանության արտաքին ցույցեր արեցին, միայն թե ակնկալիք օգնությունն ստանան: «Դաշանց թուղթը» հայերը ներկայացնում էին որպես առաջին դաշինք եւ կամենում էին առաջին երդումները վերահաստատել, միաժամանակ ավելի շուտ բացատրում էին Հայոց Աթոռի իրավունքները: Աբգարի որդին նաեւ ասում էր, որ կամենում են հոժարեցնել լատիններին՝ փրկելու համար հայերին: Միջնորդվում էր նաեւ, որ Հայոց կաթողիկոսը Հռոմ մեկնելու դյուրություն ստանա: Բանակցությունների մեջ կարեւոր դեր էր խաղում նաեւ տպագրության գործի կազմակերպումը:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր***

# ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ՍԵՎԱՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱԶՈՐՈՒՄ

Մարդու կյանքում ամեն մի իրադարձություն յուրովի եւ առանձնահատուկ է նշվում եւ մնում հիշողության մեջ: Ամեն օր մարդ արարածը, արթնանալով, ցանկանում է իր առօրյան դարձնել լեցուն եւ իմաստալից: Սակայն դա քչերին է հաջողվում:

Սեւանի ափին գտնվող հրաշագեղ Արմաղան լեռան մասին շատերն են լսել, սակայն այդ լեռան գագաթին գտնվող գեղատեսիլ լճակը եւ նորակառույց հրաշալի եկեղեցին քչերն են տեսել: Իսկ այդ երկու հրաշալիքները տեսնելու համար այքան էլ մեծ ջանքեր հարկավոր չեն: Միայն թե լինեն Աստծո բարեհաճությունը եւ մարդկային կամքի դրսեւորումը:

Սեւանի ոստիկանության կայազորի կյանքում դա հաջողվեց իրականացնել, երբ կայազորի պետ՝ գնդապետ Վարդան Խաչատրյանի, Քարվաճառի զորամասերի եւ Սեւանի կայազորի հոգեւոր սպասավոր Սուրեն սարկավագ Գեւորգյանի նախաձեռնությամբ նոյեմբերի 13-ին Արմաղան լեռան գագաթին իրականացավ կայազորի սպաների եւ նրանցից ոմանց ընտանիքների մկրտության արարողությունը: 37 հոգի դարձան Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի որդեգիրները: Մկրտությունը տեղի ունեցավ լեռան վրա գտնվող Սբ Հարություն եկեղեցում՝ ձեռամբ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպս Աբրահամյանի եւ այլ հոգեւորականների: Վրթանես սրբազանն իր խոսքում մասնավորապես նշեց. «Սիրելի՛ ներկաներ, Սուրբ Գրքում տեսնում ենք, որ մարգարեները, ինչպես նաեւ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, հաճախ էին բարձրանում լեռ կամ բարձր սար՝ աղոթելու: Այսօր մենք եւս բարձրացել ենք լեռ ոչ միայն աղոթելու, այլեւ սուրբ մկրտության արարողություն կատարելու»:

Մկրտության արարողությունն առաջին անգամն էր ոստիկանության կայազորում եւ նախադեպը չուներ, սակայն կազմակերպիչները վստահություն հայտնեցին, որ դա դեռ սկիզբն է. շարունակությունն առջեւում է: Մկրտությունը մեծ արձագանք ստացավ, եւ վստահ ենք, որ նախանձելի օրինակ կդառնա շատերի համար: Այդ օրը կայազորի համար իիրավի նշանակալից էր ու անմոռանալի:

***Սուրեն սրկ. ԳԵՎՈՐԳՅԱՆ***
***Քարվաճառի զորամասերի եւ***
***Սեւանի կայազորի հոգեւոր սպասավոր***

# ՊԼԵՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԳԱԲՐԻԵԼ ԳՅՈՒՐՋՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՆՐԱ ՍՏԵՂԾԱԾ ՇՐՋԻԿ ԱՐՎԵՍՏԱՆՈՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Պլեներային գեղանկարչության սկզբունքները նշանակալի դեր են խաղացել մեր արվեստի խոշոր վարպետներից մեկի՝ Գաբրիել Գյուրջյանի գեղարվեստական լեզվի ձեւավորման գործում: Այդ է վկայում ոչ միայն նրա գեղարվեստական ժառանգությունը, այլեւ նրա ստեղծած յուրովի բացառիկ շրջիկ արվեստանոցը, որի կարեւորագույն նպատակն էր անմիջականորեն պլեներում աշխատելը: Սակայն սկզբում անդրադառնանք նկարչի կյանքին ու ստեղծագործությանը:

Գաբրիել Գյուրջյանը ծնվել է 1892 թ. Արդվին քաղաքում՝ Արեւմտյան Հայաստանի ամենագեղատեսիլ վայրերից մեկում: Այս վայրի հրաշալի բնությունն ազդել է ոչ միայն նկարչի մասնագիտության ընտրության վրա, այլեւ կանխորոշել բնանկարի ժանրի ընտրությունը:

Մասնագիտական կրթությունը Գյուրջյանն ստացել է Պենզայի գեղարվեստական ուսումնարանում: Ուսուցումն ընթանում էր XX դ. սկզբի ռուս ռեալիստական գեղանկարչության ավանդույթներով, գեղանկարչություն, որին բնորոշ էր շրջապատող աշխարհի երեւույթների ճշմարտացի պատկերման ձգտումը: Հայտնի է, որ ռուս արվեստի այդ ժամանակաշրջանի լավագույն վարպետները մեծ հետաքրքրությամբ էին յուրացնում եվրոպական գեղանկարչության առաջադիմական նվաճումները՝ մասնավորապես պլեների սկզբունքները եւ առանձնապես հաջողում բնանկարչական ժանրում:

Չնայած երիտասարդ նկարչի ուսման տարիներն ավարտվել էին 1920 թ., այնուամենայնիվ, նրա ինքնուրույն ստեղծագործական գործունեության սկիզբը կարելի է համարել ավելի վաղ շրջանը, օրինակ՝ 1914 թ., երբ նա ստեղծեց «Փողոց Արդվինում» հրաշալի էտյուդը, ինչպես եւ մի շարք այլ կտավներ՝ նկարված ուսման տարիներին: Հիշյալ էտյուդում արդեն կարելի է տեսնել նկարչի հետաքրքրությունը՝ լուսավորության ժամանակային պահերի, պատկերային տարրերը միավորող եւ նրանց գունային բազմազանություն հաղորդող լուսաօդային միջավայրի նկատմամբ: Այստեղ երիտասարդ նկարիչը կարողացել է վերարտադրել ընդհանուր քրոմատիկ տոնայնությունը, որի մեջ ընկղմված են այս պարզ մոտիվի պատկերային բաղադրիչները: Այս աշխատանքում արդեն նկատելիորեն արտահայտվել են երիտասարդ գեղանկարչի պրոֆեսիոնալ ունակությունները, իրական մոտիվի ամբողջական գեղարվեստական կերպարը վերարտադրելու կարողությունը, մասնավորապես լուսաօդային միջավայրի վերարտադրման միջոցներով քրոմատիկ ներդաշնակության կառուցումը:



Սակայն Գյուրջյանի գեղարվեստական հնարավորությունները մենք կտեսնենք 1922 թ. հայրենիք՝ Երեւան վերադառնալուց հետո ստեղծված աշխատանքներում: Այդ ժամանակ այստեղ արդեն ակտիվորեն աշխատում էր հայ արվեստի հրաշալի վարպետների մի ստվար խումբ. Սարյան, Գայֆեջյան, Աղաջանյան, Առաքելյան, Կոջոյան եւ ուրիշներ: Այս պահից սկսվում է մեր վարպետի բացառիկ ակտիվ գործունեությունը ոչ միայն ստեղծագործական, այլեւ հասարակական ոլորտում, որը ոչ պակաս չափով էր ազդել այդ ժամանակաշրջանի գեղարվեստական ընթացքի զարգացման վրա:

Դիտարկենք Գյուրջյանի գեղարվեստական գործունեության սկիզբը՝ 20-ական թվականներին ստեղծած գործերի հիման վրա: Առանձնակի հետաքրքրություն է առաջացնում «Կամուրջ Զանգվի վրա» բնանկարը՝ նկարված 1923 թվականին: Այն ուշադրություն է գրավում թե՛ իր կոմպոզիցիոն սյուժեով, թե՛ լույսի խնդրի լուծումով: Նրա գեղանկարչական լուծումն առանձնանում է գունային մշակման հարստությամբ: Դրան է նպաստում բնանկարչական մոտիվի բոլոր տարրերը ներթափանցող արեւային վառ լույսի կերպարանափոխող դերը: Ուշադրություն է գրավում կանաչների երանգներով ջրի մակերեսի գունային մշակումը: Համոզիչ է լուծված նաեւ տարածական խնդիրը: Գունաօդային հեռանկարը, թուլացնելով դեպի խորքը գնացող պլանների քրոմատիկ ուժը, օժանդակում է ընդհանուր գեղանկարչական կառուցվածքի ամբողջականությանը: Այս աշխատանքով նկարիչը ցուցադրում է իմպրեսիոնիստների դասերից քաղած լույսի եւ գույնի էֆեկտները հաղորդելու իր ունակությունը: Սակայն մեր վարպետն այդ դասերն օգտագործում է յուրովի մշակելով: Բացի պլեներային խնդիրներ լուծելուց, նա ձգտում է պահպանել նաեւ պատկերվող տեսարանի ե՛ւ նյութական հավաստիությունը, ե՛ւ բոլոր տարրերի կառուցվածքային հստակությունը: Իմպրեսիոնիստների գեղանկարչական նվաճումների նման մեկնաբանումով, այսինքն՝ պլեների հնարքների օգտագործումով, բնօրինակի նյութական ասպեկտի վերարտադրումով, Գյուրջյանը կմշակի իր գեղանկարչության գեղարվեստական լեզուն, որի հիման վրա էլ հետագայում կստեղծվեն նրա գործերը:

Դիտարկենք մի շարք հատկանշական օրինակներ՝ այդ վաղ ժամանակաշրջանից սկսած:

Առավել հաջողված կտավներից կարելի է համարել «Ղարաքիլիսայի լեռները»: Առանձնահատուկ ճշմարտացիությամբ է զգացվում լեռների վրա դեղնականաչ լանջերով թեթեւակի սահող վաղորդյան լույսը: Նկարչին հաջողվել է լուծել սովորաբար բարդ մի խնդիր. կանաչների ամենաբազմազան երանգների ողջ սանդղակը մի ներդաշնակ ամբողջության բերել-հանգեցնել, կազմակերպել դրա գուներանգային աստիճանավորումը, որի միջոցով էլ կառուցվում է այս բնանկարչական մոտիվի կոլորիստական կերպարը: Վարպետի այս ստեղծագործությունը նույնպես համոզիչ օրինակ է իմպրեսիոնիստական դասերի հաջող յուրացման, սակայն անհատական մոտեցմամբ:

Հետագայում՝ մինչեւ իսկ 40-ականների կեսերը, Գյուրջյանը կստեղծի զգալի թվով աշխատանքներ՝ արդեն իր կողմից մշակված կերպավորման համակարգի հիման վրա: Սյուժեներով նրանք կընդգրկեն Հայաստանի բնության ամենաբազմազան տեսարանները:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Սկիզբը՝ էջ 4*

Առանց մեզ ու մեր իղձերին, մեր տառապանքներին ու մաքառումներին ծանոթ լինելու, ***ինչո՞ւ եք էդքան կոշտ ու կոպիտ դիպչում մեր էսքան թարմ ու խոր վերքերին՝ էդքան մոտիկ ու հարազատ ձեռքով***» (ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Այս էր Եղեռնի հետեւանքով ստեղծված դաժան, կոպիտ իրականությունը, որի մեջ հայտնվել էին թե՛ արեւմտահայ գաղթականությունը եւ թե՛ ողջ հայությունն առհասարակ:

Բնակվելով Թիֆլիսում՝ Հովհ. Թումանյանն իր աղետավոր հայրենիքի հետ էր, հոգով ու մտքով այնտեղ էր ապրում, արձագանքում էր նրա ամեն մի կանչին: Ճիշտ է, որ մեծ տերությունների այլունոտ քաղաքականության զոհն էր հայ ժողովուրդը, նրանք չբռնեցին ոճրագործի ձեռքը եւ չդադարեցրին հայոց համազգային աղետը, սակայն ճիշտ է եւ այն, որ աշխարհի մեծ մարդասերները Ամերիկայից, Անգլիայից, Ֆրանսիայից ու այլ երկրներից վերաբերմունք արտահայտեցին նրա հանդեպ, աղետյալներին ցուցաբերեցին մարդասիրական ու բարեգործական գնահատելի օգնություն: 1916 թ. ապրիլին 18-ին Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունն արտակարգ նիստ էր գումարել՝ դիմավորելու անգլիացի եպիսկոպոս Հարոլդ Բըքստոնի ղեկավարած բժիշկների պատվիրակությանը, որը Թիֆլիս էր ժամանել՝ Հայաստան մեկնելու եւ Եղեռնի դժոխքից մազապուրծ փրկված հայ փախստականներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով: Այս նիստում էլ, ի պատիվ այդ առաքելության մասնակիցների, բարի երթի խոսք է ասում Հովհ. Թումանյանը: Ողջունելով հյուրերին եւ նրանց նախաձեռնությունը, ընդգծելով, որ Հայաստանն այժմ ամեն տեսակ բժշկի ու մխիթարիչի կարիք ունի՝ նա մի հետաքրքիր համեմատություն է անում՝ բերելով հայկական ժողովրդական հեքիաթներից մեկի հերոսի օրինակը: Նա գիտեր, որ իր երկրի փրկությունը կախարդական աշխարհից անմահական ջուրը բերելն է, բայց նաեւ գիտեր, որ պետք է պատրաստ լիներ դիմագրավելու բոլոր փորձություններին՝ լեղին խմեր եւ ասեր, թե ի՜նչ անմահական ջուր է, ճանապարհի փուշն ու տատասկը պոկեր եւ ասեր՝ ի՜նչ բուրավետ ծաղիկ է: Ճիշտ այդ հերոսի նման՝ սրանք էլ Հայաստանում տեսնելու էին անհավատալի բաներ ու անհաղթահարելի դժվարություններ: «Էսպես էլ դուք,- ասել է Հովհ. Թումանյանը,- որ գնում եք Հայաստան՝ նրան օգնելու, իմացե՛ք, որ այնտեղ ցուրտ կա, սով կա, եւ շատ ուրիշ նեղություններ: Եթե դուք էդ դժվարությունները, դառնությունները զգացիք, չեք հասնելու ձեր նպատակին եւ չեք փրկելու նրան: Պետք է էդ դժվարությունները չզգաք եւ դրանցից չհաղթվեք: Միայն էՆ ժամանակ դուք կհաղթեք: Այո՛, սա հերոսի համար է ասված: Բայց չէ՞ որ դուք էլ արդեն գնում եք հերոսության»:

Բայց այս աղետալի օրերին անգամ Հովհ. Թումանյանը թույլ չի տալիս ազգային արժանապատվությունից որեւէ նահանջ, չի հանդուրժում որեւէ նսեմացում: Ընդհակառակը, բարձր գնահատելով փրկարար առաքելությամբ Հայաստան մեկնող, նրա վերքերը բուժելու նպատակով ժամանած բժիշկներին՝ քաղաքացիական բարձր հպարտությամբ ընդգծում է նաեւ, որ հայ ժողովուրդն ու Հայաստանը մի սովորական աղետյալ չեն, այլ մի «բարձր աղետյալ, որ առողջանալով՝ շատ բան ունի տալու մարդկությանն ու աշխարհքին»: «Հետեւաբար,- շարունակում է նա,- ձեր գործը լոկ մարդասիրությունով չի սահմանափակվում, այլ ***դա մի ծառայություն է, որ դուք անում եք քաղաքակրթությանը եւ մարդկությանը: Հայաստանին օգնողը պետք է համոզված լինի, որ Հայաստանն ընդունակ է հազարապատիկը վերադարձնելու աշխարհքին:***

[Բարով գնաք] Բարի՜ ճանապարհ, կամ ավելի ճիշտը, բարի գալուստ, որովհետեւ ***ես, իբրեւ Հայաստանի բանաստեղծը, ինձ միշտ էնտեղ եմ զգում:*** Եկե՛ք: Մենք միայն ցավեր չունենք: Եկեք տեսե՛ք: Եթե գեղեցիկ է Բոսֆորը, նրան դժվար թե գիջանի Արարատյան ծովածավալ դաշտի եւ երկնահաս Արարատի ու Արագածի բիբլիական վեհությունը: Եվ իզուր չի մեր երկիրը՝ Հայաստանի բարձրավանդակը էսքան մոտիկ երկնքին: Նա մի մեծ խորհուրդ ունի: Նա իր վերջին տանջանքներն է անցկացնում: Օգնեցեք, որ ազատվի այդ վերջին տանջանքներից էլ…» (ընդգծ. մերն են - Ս. Մ.):



Հովհ. Թումանյանը սովորական, չոր ու ցամաք լրագրող կամ հրապարակախոս չէր, եւ իրադարձությունների սթափ գնահատումը նրա հոդվածներում իրականացվել է գունագեղ ու հյութեղ լեզվով, նրա մտածողությանն ու ոճին բնորոշ պարզությամբ ու պատկերավորությամբ: Այս հատկանիշները նրա հոդվածներին հաղորդում են կենդանի շունչ, վավերականություն ու հավաստիություն, դրանք դարձնում հրապարակախոսության, գիտականի ու գեղարվեստի ներդաշնակության կատարյալ եւ օրինակելի նմուշներ: Որպես հենց Եղեռնի օրերին ականատեսի անմիջականությամբ գրված վավերագրեր՝ դրանք ցեղասպանության անհերքելի ապացույցներ են եւ ժխտումը ցեղասպանությունն ուրանալու բոլոր ջանքերի ու փորձերի, ունեն ինչպես պատմաճանաչողական, այնպես էլ գեղարվեստական անգնահատելի արժեք:

*Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ԼԵՍԻՆԳԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

## Լեսինգը գեղանկարչության եւ ճարտասանության սահմանների մասին



Սկիզբը՝ թիվ 22

Այսպիսով, ըստ Լեսինգի, բոլոր արվեստներն արտացոլում են իրականությունը ոչ թե այն բանի հետեւանքով, որ նրանցից ամեն մեկն օգտագործում է իր միջոցները՝ իր գեղարվեստական լեզվով, այլ նրանցից ամեն մեկն առավել լրիվությամբ բացահայտում է իրականության այն կողմը, որի համար հարմար են այդ արվեստի յուրահատուկ միջոցները: Բացի ընդհանուր կանոններից, նրանցից ամեն մեկն ունի իր յուրահատուկ օրենքները: Այս տեսանկյունից էլ նա մոտեցել է գեղանկարչությանը եւ քնարերգությանը. նրանց սահմանները հարաբերական են եւ ոչ բացարձակ. «Գեղանկարչությունը նույնպես կարող է պատկերել գործողություն, միայն միջնորդավորված, առարկաների օգնությամբ»: Ընդհակառակը, քնարերգությունը պետք է պատկերի նույնպես առարկաներ, սակայն գործողությամբ միջնորդավորված»: Գեղանկարչի միջոցները՝ գծերը եւ գույները, զգայական են: Դրանք գեղանկարչին հնարավորություն են տալիս պատկերելու անմիջականորեն նկարագրվող առարկաների պատկերը: Ընդհակառակը, բանաստեղծի միջոցի՝ խոսքի եւ նկարագրվող առարկայի զգայական պատկերի միջեւ չկա ուղիղ կապ, անմիջական համապատասխանություն, որովհետեւ խոսքը զրկված է այն զգայական բնույթից, որն ունի գեղանկարիչը: Այդ պատճառով, ըստ Լեսինգի, բանաստեղծի կողմից օգտագործվող նշանները **«կամայական»** նշաններ են՝ ի տարբերություն քանդակագործի եւ գեղանկարչի: Սակայն բանաստեղծը պետք է գեղանկարի այնքան կենդանի, որ մենք երեւակայենք, իբր ստանում ենք իսկապես զգայական պատկերացում պատկերվող առարկաների մասին:

Մյուս կարեւոր սահմանափակումը, որ կատարում է Լեսինգը, խոսելով քնարերգության եւ գեղանկարչության տարբերությունների մասին, այն օբյեկտների գոյության ըմբռնումն է, որոնց նկարագրությունը միանման հնարավոր է եւ հաճելի երկու արվեստների համար էլ: Այդպիսի օբյեկտներ են, ըստ Լեսինգի, «կոլեկտիվ գործողությունները», որոնց ընթացքում շարժումը բաշխված է բազմաթիվ իրար հետ կապված առարկաների միջեւ: Սկզբունքորեն գեղանկարչությունը եւ քանդակագործությունը, Լեսինգի կարծիքով, սահմանափակված են գործողության որոշակի մի պահի նկարագրությամբ: Նրանք ընդունակ չեն մի ստեղծագործության մեջ ընդգրկելու փոփոխվող եւ զարգացող իրականության պատկերը, մի եւ նույն օբյեկտի շարժումը: Սակայն եթե կերպարվեստի տարբեր ձեւերին միայն դժվարությամբ է հաջողվում «հասարակ» անհատական գործողությունների պատկերումը, ապա «կոլեկտիվ» գործողությունների, որոնցում ներքաշված են մի քանի կամ բազմաթիվ գործող անձինք, ըստ Լեսինգի, այս դեպքում խնդիրն այլ է: «Կոլեկտիվ» գործողությունները, այսինքն՝ հարաբերությունները, որոնց մեջ ներքաշված են մի քանի մարդիկ եւ արտաքին աշխարհի առարկաներ,- ըստ որում՝ ամեն մեկի վիճակն առանձնանում է մյուսների դիրքից, եւ նրանք բոլորը միասնական պատկերում բացահայտում են նրանց բոլորին կապող շարժումների իմաստը,- Լեսինգը համարում էր պատկերավորման առարկա, որը հասանելի է ե՛ւ քնարերգությանը, ե՛ւ գեղանկարչությանը: Լեսինգի յուրաքանչյուր քայլ այստեղ կապված է կլասիցիզմի դեմ պայքարին եւ ռեալիստական արվեստի սկզբունքների հաստատման հետ: Նա ըմբոստանում է կլասիցիզմի սառը, չոր դատողությունների դեմ, ապացուցում, որ ե՛ւ քնարերգությունը, ե՛ւ գեղանկարչությունը պետք է պատկերեն տեսանելի, իրական առարկաներ, նրանց մարմնական գեղեցկությունը, ընդօրինակեն «տեսանելի բնությանը»: Նա առաջ է քաշում գեղեցիկի նոր ըմբռնում, ի տարբերություն կլասիցիստների, գեղեցիկը, ապացուցում է նա, ընդհուպ մոտենալով գեղեցիկի նկատմամբ մատերիալիստական հայացքին, ոչ թե պայմանական, կտրված, ռացիոնալիստական իդեալն է, այլ նրա բարձրագույն ձեւը մարդու գեղեցկությունն է՝ նրա ազատ, հոգեկան եւ ֆիզիկական կատարյալ զարգացման մեջ: Այդպիսի մարդու գեղեցկության նկարագրությունը եղել է հունական արվեստի գլխավոր թեման:

Կերպարվեստի համար մեծ նշանակություն ունեցավ Լեսինգի «Լաոկոոնում» ձեւակերպած ուսմունքը «արդյունավետ պահի» մասին: Քնարերգությունը եւ գեղանկարչությունը կարող են ընտրել «մշտապես փոխվող իրականությունից» միայն «մի պահ», իսկ գեղանկարիչն անգամ այդ պահը՝ «որոշակի տեսանկյունից»: Այդ պատճառով, պնդում է Լեսինգը, արվեստագետի համար մեծ նշանակություն ունի այդպիսի պահի ընտրությունը, որը կգրգռեր երեւակայության ստեղծագործական գործունեությունը, հանդիսատեսին հնարավորություն կտար գեղանկարչի պատկերած միայն մի պահի հիման վրա դատել երեւույթի զարգացման, նրա ներկայի եւ ապագայի մասին:

Շարունակությունը՝ էջ 8

# ՏԱԹԵՎԻ ՏԱԹԵՎԱՑՈՒՆՔ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 5

Ըստ ժողովրդային ըմբռնման, այս սյունը եղել է մի յուրօրինակ վարդապետական գավազան, եւ Սյուն-գավազանով է որոշվել Սյունյաց աշխարհի վարդապետների ստացած վարդապետական աստիճանը, որի խորհրդանիշն է վարդապետական գավազանը, որքանով է վավերական եղել: Ասվում է, որ անցյալում աբեղային վարդապետական գավազան տալիս եպիսկոպոսը սբ պատարագից հետո եկեղեցականների հանդիսավոր թափորով դուրս էր գալիս տաճարից եւ երեք անգամ խունկ ծխում այս Գավազան-սյան առաջ: Եթե աբեղան արժանի էր վարդապետական աստիճանի, ի նշան հավանության, Գավազան-սյունը ճոճվում էր, իսկ եթե ոչ՝ մնում էր անշարժ:

Հատկանշական է նաեւ այն հանգամանքը, որ երկրորդ սյունը, որի մոտ եւս վարդապետական գավազան է տրվել, դարձյալ գտնվում է Սյունիքում՝ Որոտնավանքում, ուր թաղված է Գրիգոր Տաթեւացու հռչակավոր ուսուցիչը՝ Հովհան Որոտնեցին: Որոտնեցու մահից հետո Տաթեւի սյան հետեւողությամբ նման մի սյուն են կառուցում նաեւ Որոտնավանքում: Այս սյունը թեեւ իր բարձրությամբ զիջում է Տաթեւի սյանը, ինչպես նաեւ նրա նման ճոճվող չէ, սակայն նշանավոր է նրանով, որ եթե Տաթեւի սյան առաջ վարդապետական գավազան էր տրվում, ապա ծայրագույն վարդապետական աստիճանը տրվում էր Որոտնեցու շիրմի մոտ: Գրիգոր Տաթեւացուց հետո Տաթեւը սերտորեն կապվեց Տաթեւացու անվան հետ: Հայոց Եկեղեցու այս մեծ վարդապետը մի նոր հոգեւոր-իմացական փայլ եւ շունչ հաղորդեց Տաթեւի վանքին:

Գրիգոր Տաթեւացին նաեւ վերստին գրել եւ կանոնակարգել է վարդապետական գավազանի հոգեւոր խորհուրդը եւ գավազանի տվչության կանոնը, որը կատարվում է վարդապետական աստիճան տալու ժամանակ:

Գրիգոր Տաթեւացի - Հովհան Որոտնեցի, որպես աշակերտ եւ ուսուցիչ, հարաբերակցությունն արտահայտվել է նաեւ վարդապետական աստիճանների տվչության ժամանակ: Տաթեւում, ուր Գրիգոր Տաթեւացին է ամփոփված, տրվել է վարդապետական գավազանը, իսկ Որոտնավանքում, ուր Հովհան Որոտնեցու շիրիմն է, տրվել է ծայրագույն վարդապետական աստիճանը:

Տաթեւը եւ Սյունիքը վարդապետ հասկացության հետ կապվել են մի քանի պատճառով: Նախ, որ վարդապետական աստիճանների տվչության կանոնը վերստին Տաթեւացին է գրել, երկրորդ՝ մեր մատենագրության մեջ եռամեծար՝ երիցս մեծարյալ տիտղոսը դարձյալ գլխավորաբար տրվել է Որոտնեցուն եւ Տաթեւացուն:

Արդ, ինչով էին պայմանավորված վարդապետական աստիճանի հանդեպ Սյունիքում եղած առանձնակի հարգանքը եւ ճոճվող սյունը վարդապետական գավազանի հետ համեմատելն ու անվանելը: Այս հարցը ճիշտ հասկանալու համար հարկավոր է հետադարձ մի հայացք նետել 14-15-րդ դարերին, երբ ի խնդիր հայ ժողովրդի ազգային-եկեղեցական միասնության, իրենց գործունեությունն էին ծավալել Սյունյաց աշխարհի այս երկու մեծ վարդապետները եւ Սյունիքի նշանավոր վարդապետարանները:

Պարբերական ասպատակությունների եւ այլադավան քարոզիչների ցանած երկպառակության սերմերից բաժան-բաժան եղող Հայոց աշխարհում վարդապետական աշխատանքների պաշտպանությունը, ասես, դառնում է հայ ոգու եւ իմացականության կենսունակության ու հարատեւության խորհրդանիշը՝ նվիրագործվելով ճոճվող սյան ավանդությամբ:

Գավազան-սյան միջոցով այս հարատեւությունն է շեշտվում նաեւ այն ավանդությամբ, որում պատմվում է, որ երբ Լենկթեմուրը, մահ ու ավեր տարածելով, գալիս եւ հասնում է Տաթեւ, չարությամբ լցված ցանկանում է այս սյունը տեղից վայր գցել: Հրամայում է տասը զույգ գոմեշ լծել եւ նրանց լծերից գութանի փոկով կապել Սյուն-գավազանը: Երբ գոմեշները սկսում են քաշել, փոկը կտրվում է, եւ բոլոր գոմեշները ձորն են թափվում, իսկ սյանը որեւէ վնաս չի հասնում (Ազգագրական հանդես, 1898 թ., հտ. Գ, էջ 124):

Եվ վերջապես, այս վանքի վերջին նշանավոր ավանդությունը կապվում է Տաթեւի հռչակավոր զանգերի հետ: Համաձայն ավանդության՝ այս զանգերով է պայմանավորված անգամ ողջ նահանգի՝ Զանգեզուր կոչվելը:

Ինչպես հայտնի է, ըստ այս ավանդության, երբ թշնամիները ներխուժել են Սյունյաց աշխարհ, ի նշան վտանգի, սկսել են խփել Տաթեւի զանգերը կամ առանձին մի հսկայական զանգ, եւ յուրաքանչյուր գյուղից մի զորաջոկատ է ելել ընդդեմ թշնամու, եւ այսպես գումարված զորքը Հայոց աշխարհից դուրս է քշել թշնամուն: Ահա այս պատճառով նրանք գտնում են մի անարգ դավաճանի, որը վնասում է զանգը, եւ վտանգի պահին այն չի հնչում եւ ի մի չի հավաքում Սյունյաց աշխարհի քաջորդիներին, եւ ժողովուրդը ողբաձայն ասում է. «Զանգն էլ զուր է, զանգն էլ զուր է», որից եւ նահանգի անունը մնում է Զանգեզուր:

Նման մեկ այլ ավանդությամբ էլ պատմվում է, որ Լենկթեմուրը Տաթեւի վանքի զանգակատան տակ հսկայական խարույկ է վառում, որ զանգը հալվի եւ թափվի: Զանգը չի հալվում, սակայն այն կորցնում է իր հնչեղությունը:



Պատմության մեջ էլ, սակայն, իրապես հռչակված է եղել Տաթեւի զանգը, որը պատրաստել է տվել Սյունյաց տան մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը: Այս զանգի վրա եղել է երեք արձանագրություն, որոնցից առաջինը գրել է տվել Ստեփանոս Օրբելյանը, իսկ վերջին երկուսը գրվել են ի հիշատակ նրա: 1304 թ. գրված առաջին արձանագրության վերջում ասվում է. «Սիւնեաց գահին կոչեա ի փառսդ հայրենեաց» (այսինքն՝ այս զանգը, ի փառս հայրենյաց, թող հնչի Սյունյաց գահի՝ աթոռի համար):

Երկրորդ արձանագրությունում զուգահեռ է անցկացվում այս զանգի ձայնի եւ աստվածային օրհներգության միջեւ, որը հանգստություն էր պարգեւելու եւ Ստեփանոս Օրբելյանի աճյունին: Ինչպես այդ արձանագրությունում է ասվում. «Լսելի արա ինձ, Տէր, զձայն ցնծութեան եւ զուրախութեան եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք»:

Զանգի վրա եղած երրորդ արձանագրությունում, հանձինս Ստեփանոս Օրբելյանի, շեշտվում է Սյունյաց հոգեւորականության պայքարը հայոց հավատքը օտարամուտ հոսանքներից անաղարտ պահելու նվիրական գործում. «Այս Տէր Ստեփանոս Օրպէլեանց մեծաւ ջանիւ ուղղափառ պահէ զաւանդս յեկեղեցիս հայոց»:

Հաջորդող դարերում եւս Սյունիքը «մեծաւ ջանիւ»՝ մեծ ջանքերով ընդդեմ արտաքին բոլոր ճնշումների եւ ստապատիր խոստումների հավատարիմ մնաց իր Մայր Եկեղեցու ավանդներին, որը 18-րդ դարում դավիթբեկյան շարժման հերոսական օրերին Տաթեւի վանքում արտահայտվելու էր ժողովրդի՝ Դավիթ Ուրացողին ուղղված հետեւյալ խոսքերով.

**Լույսը Լուսավորչի հավատին,**
**Վա՛յ ուրացող հային...**

Եվ այսօր էլ Տաթեւի վանքը մեզ պատգամում է հավատարիմ մնալ Սյուն-գավազանի եւ Սյունյաց աշխարհի եռամեծ վարդապետների ավանդներին՝ վանքի զանգերի միջոցով ողջ Հայոց աշխարհում հնչեցնելով դավիթբեկյան ուխտերի կողմից բոլոր ժամանակների ուրացողներին ուղղված հիշյալ խոսքերը:

*Վարդան ԴԵՎՐԻԿՅԱՆ*
*Բանասիրական գիտ. թեկնածու*

# ԼԵՍԻՆԳԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

*Սկիզբը՝ էջ 7*

«Լաոկոոնում» Լեսինգն անհամեմատ շատ անդրադարձավ գրականության զարգացման հարցերին: Զիջելով գեղանկարչությանը եւ քանդակագործությանը առարկաների մարմնական լրիվ նկարագրի վեր հանման մեջ՝ նրանց գերազանցում է այլ հարաբերությունների տեսակետից: Այն կարող է պատկերել իրականության զարգացումը, մարդկանց կրքերը եւ գործողությունները այնպիսի լայնքով ու բազմակողմանիությամբ, դեպքերի մեջ այնպիսի ներթափանցմամբ, որը մատչելի չէ գեղանկարչին եւ քանդակագործին: «Քնարերգությունը ավելի լայն արվեստ է, նրան մատչելի են այնպիսի գեղեցկություններ, որոնք երբեք մատչելի չեն գեղանկարչությանը»: Հատկապես



կարեւոր է, որ ի տարբերություն քանդակագործության եւ գեղանկարչության, որոնք միայն վերցնում են որեւէ պահ եւ այն էլ՝ անշարժ, քնարերգությունը վերցնում է շարժման, զարգացման մեջ մարդկանց կրքերը եւ գործողությունները, արարքները, ընդ որում՝ բանաստեղծը դա անում է անմիջականորեն, իսկ քանդակագործը կամ գեղանկարիչը դրանք պատկերում են կողմնակիորեն՝ մարմնի դիրքի, դիմախաղի, դեմքի արտահայտության մեջ: Լեսինգի պայքարն ուղղված էր կլասիցիզմի, Կլոպշտոկի (Ֆրիդրիխ Գոտլիբ, 1724-1803) սառը նկարագրական արվեստի դեմ: Ձգտելով քնարերգությունն ազատել «գեղանկարչության շղթաներից»՝ Լեսինգը հասնում է քնարերգությունն առավելագույն չափով կյանքին մերձեցնելուն՝ հարստացնելով այն մարդկային ճակատագրերի եւ բնավորությունների խորությամբ, պատմական զարգացման դրամատիկականությամբ, կյանքի հակասությունների ցուցադրմամբ: Հենց դրա մեջ է նրա աշխատության պատմական ահռելի նշանակությունը, ինչն անկրկնելի հետք թողեց հետագա գեղագիտական մտքի եւ իրապաշտական գրականության վրա:

*Շարունակելի*

***Ռոմանոս ՍԱՀԱԿՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ***

# ՊԼԵՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԳԱԲՐԻԵԼ ԳՅՈՒՐՋՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ...

*Սկիզբը՝ էջ 6*

Դիտարկված բնանկարները համոզիչ վկայություն են լույսի խնդրի նկատմամբ նկարչի հատուկ հետաքրքրության եւ անուղղակիորեն փաստում են իմպրեսիոնիզմի դասերի հաջող յուրացումը: Այս առումով ուշագրավ է նրա արտահայտած կարծիքը ցուցահանդեսներից մեկի ցանկում գրված նախաբանում, որտեղ նա նշում է բնության փոփոխական եւ անցողիկ պահերի երեւույթները. «Բնության պատկերը ստատիկ չէ: Այն շարժուն է, ինչպես ժամանակն ու կյանքը: Գրավիչ է դիտել եւ արտահայտել բնության վեհ կերպարանքի փոփոխությունների հոսուն, անկայուն ընթացքը: Որքան թանկ են այդ արտահայտությունների նրբերանգները: Մե՛րթ այն կիամակվի խոժոռ սեւեռունությամբ, եւ կիսախավար գույների տխուր ելեւէջները կլցնեն մթնոլորտը, մե՛րթ կիայտնվի երկրի կերպարանքը, եւ կտիրի անխռով անդորր, ու կինչի արծաթյա երանգների ներդաշնակությունը: Բայց ահա մոլեգին բարկությունը պատեց երկիրը, եւ հակադիր գույների չարագույժ մարտը հնչում է բարձրաձայն, ցնցող սիմֆոնիայով: Ամպրոպն անցավ, հեզ ուրախ ժպիտով լուսավորվեց երկրի կերպարանքը: Պայծառացան գույները, երանգների վառ ելեւէջները հնչում են ուրախ մեղեդիով» (Каталог отчетно-этюдных работ Союза Советских Художников Армении и XVIII передвижная мастерская, 1940):

Բնության այս խանդավառ բանաստեղծական նկարագրությունն ըստ էության շատ ընդհանրություններ ունի իմպրեսիոնիզմի վարպետների աշխարհայացքային ծրագրի հետ, օրինակ՝ «...բնության կերպարանքի փոփոխությունների հոսունությունը...»:

Չիմանալով այս տողերի հեղինակին՝ կարելի է կարծել, որ նա իմպրեսիոնիզմի մոլի կողմնակից է: Բայց դա այդպես չէ: Հանրահայտ է, որ նկարիչ-



ների արտահայտած ծրագրային մտքերը միշտ չէ, որ համընկնում էին նրանց ստեղծագործական գործելակերպին: Գյուրջյանը, չափազանց մոտիկից ծանոթ լինելով իմպրեսիոնիզմի ուղղությանը եւ բավական շատ բան յուրացնելով իր համար նրանց արվեստից, միեւնույն ժամանակ բավական զուսպ էր նրանց գեղարվեստական սկզբունքներն օգտագործելիս: Սակայն մեջբերված քաղվածքն արժեքավոր է նաեւ այն առումով, որ վառ ապացույց է հանդիսանում բնության, մասնավորապես, հայրենի բնության նկատմամբ անսահման սիրո եւ նվիրվածության:

Վերադառնալով նկարչի ստեղծագործությունների դիտարկմանը՝ նշենք, որ նրանց մեջ հազվադեպ կարող են հանդիպել այնպիսիք, որոնցում վերարտադրված են բնության փոփոխական, անցումային պահերը: Այս կարգի փոքրաքանակ նկարներից կարելի է նշել «Սեւան. Ծառեր» (1936 թ.) բնանկարը: Այս կտավում նկարիչը մեծ ճշմարտացիությամբ է որսացել եւ արտահայտել Սեւանի ամպամած օրվա խիստ մթնոլորտը: Մեծ համոզչությամբ է վերարտադրված ափամերձ հին ուռիների ճյուղերը կտրուկ ճկող պոռթկուն քամու տպավորությունը: Դիտորդն անմիջապես զգում է տագնապալի դրամատիզմի մթնոլորտ: Դրան շատ բաներով են նպաստում հագեցած եւ համարյա մոնոխրոմ կոլորիտը, մուգ կանաչ, կապտամոխրագույն եւ գորշ խամրած տոների ընտրությունը: Աշխատանքն ստեղծված է կարծես մի շնչով, դինամիկ ճեպանկարված կտրուկ վրձնահարվածներով:

Սակայն նման ստեղծագործությունները հազվագյուտ երեւույթ են վարպետի արվեստում: Գյուրջյանը միշտ ձգտում էր, ինչպես ինքն էր գտնում, առավել ավարտունության, եւ որպես կանոն, բնության մեջ նկարած իր գործերը շարունակում եւ ավարտում էր արվեստանոցում, ընդ որում՝ հաճախ կորցնելով զգացումի սկզբնական թարմությունը եւ անմիջականությունը: Այս կապակցությամբ կարելի է նշել, որ իմպրեսիոնիզմի վարպետներն էլ էին երբեմն շարունակում իրենց կտավներն արվեստանոցում, բայց նրանք միշտ ձգտում էին չհեռանալ իրենց գերխնդրից՝ չկորցնել բնության մեջ ձեռք բերած զգացումի անմիջականությունը: Հենց սրա մեջ է մեր վարպետի մեթոդի տարբերությունը ֆրանսիացի նկարիչների սկզբունքներից:

*Շարունակելի*

***Գարեգին ՔՈԹԱՆՋՅԱՆ***
***Արվեստաբան***



# ՔԵՌԷ ՊՈԼՈ

## Մի մարտի իրական պատմություն

*Սկիզբը՝ էջ 4*

Երկու կողմերի միմյանց խառնվելու եւ այնքան հրազենների արձակման պատճառով արեւի լույսը մթնում էր, եւ սրերի ու տեգերի անգթաբար, սաստիկ, միմյանց կոտրող մայրիների անտառներ հիշեցնող բախումից ահեղ ձայներ էին հնչում ամպերի որոտի ու մրրկված ծովի ջրերի կոհակների ձայնի նման:

Երկար ժամեր անցան. ոչ հաղթության կողմն էր երեւում եւ ոչ՝ պարտության, քանզի մի կողմի քաջությունն ու մյուսի ստվարությունը վիճակը զուգակշիռ էին պահում:

Այս տագնապալի վայրկյանին Բոհտանի զորքի զորապետ Միր Մեհեմմեդ ամիրան՝ հուժկու եւ հաջողաձեռն մի այր, աշտանակած ընտիր նժույգ, սպառազեն ու նիզակավոր, հագած երկաթյա զրահ, առաջ խաղաց, ընթացավ, իր հետեւից շատերի սպանեց հայերի գնդից եւ հասավ այնտեղ, ուր Միրզըքն էր՝ տեղացող հարվածներից զերծ մնալով՝ զրահով ամրափակված լինելու պատճառով:

Շրջվեց տեր Պողոսն ու տեսավ քրդին հաջող կերպով այդքան հառաջացած, իսկույն վազեց հասավ նրան, իր հեծած սեւ քուռակից՝ հետեւի կողմից արագ ոստնեց քրդերի զորապետի ձիու գավակը եւ մի բազկով գրկափակելով, պրկելով նրա երկու ձեռքերը նրա կրծքին՝ մյուս ձեռքով գոտուց հանեց դաշույն ու խրելով նրա ծոծրակը՝ արյուն թափեց: Զորապետն իսկույն մեռավ եւ վայր ընկավ երիվարից, իսկ ինքը, սպանվածի նիզակը վերցնելով, աշտանակելով նրա բարձրավիզ ճերմակ նժույգը, իբրեւ արագահաս կայծակ եկավ օգնելու Միրզըքին, որ նույն ժամին քաջությամբ մոտենում էր հաղթանակ տանելու: Տեր Պողոսը մնացածներին էլ զարկեց, եւ ովքեր ընկան՝ ընկան, իսկ ովքեր փախան՝ փախան՝ ցիրուցան լինելով երկրի երեսին:

Փախչողների մի մասը, որի մեջ շատ էին հրացանակիր հետեւակները, ապաստանել էր սղերդցիների գոմերում: Միրզըքն ու տեր Պողոսը, նրանց հետեւից մտնելով, պաշարեցին ու կամենում էին ձերբակալել նրանց, իսկ վերջիններս, հանդգնությամբ դիմադրելով, կռվում էին նրանց հետ: Եվ երբ անձնատուր չեղան, Միրզըքը հրամայեց գոմերն այրել: Այստեղ ապաստանածները կենդանի-կենդանի այրվեցին, իսկ նրանց ճենճերները հալչելով՝ ջրի պես, առուներով, հոսեցին դեպի մերձակա գետը, ինչն այնտեղ կանգնածները տեսան:

Հաղթողները վերցրին թշնամու բանակի ողջ ավարը եւ խնդությամբ վերադարձան իրենց տեղերը: Իսկ քրդերից փրկվածներն այլեւս չհամարձակվեցին հիշել իրենց նախկին մտադրությունն ու նաեւ այս ահավոր պարտության վրեժլուծությունը:

Մեծացավ Միրզըքի իշխանությունը, մեծարվեց տեր Պողոսի անունը, եւ նրա կենդանության լուրը զարհուրեցնում էր քրդերին մինչեւ նրա մահվան օրը:

### Պատմողի մասին

*Սա պատմող Սիմեոն վարդապետը ծնվել էր Սասնո Քաջարանց գյուղում՝ հարուստ ու անվանի ծնողներից: Անձնյա էր, թիկնավետ, հսկայակերպ, հաստուկր, խիստ զորեղ ու սրտոտ: Սա նախ ամուսնանալով ունենում է մի դուստր, ապա, կողակցի մահից ու դստերն ամուսնացնելուց հետո, քանի որ գրոց աշակերտ էր, ձեռնադրվում շուշտակ վարդապետ (շուշտակ են կոչում նախկինում ամուսնացած, ապա՝ կնոջ մահից հետո կուսակրոն ձեռնադրված հոգեւորականներին- թրգմ.), կրոնավորում Աղձնիքի ու Տարոնի երկրի վանքերում եւ Ադրիանուպոլսեցի բարեհիշատակ Պողոս պատրիարքի օրերին գնում ու մի քանի տարի մնում է Սբ Երուսաղեմում: Երբ բնակվում էր Սասունում գտնվող Սբ Աղբերիկ վանքում, որտեղ էր եւ քաջահամբավ վանահայր Գաբրիել շուշտակ վարդապետը, վանքի շուրջ բնակվող քրդերի հրոսակների արշավանքների ժամանակ վանքը թալանվելուց պահպանելու համար, վերջինիս հետ միաբանությամբ՝ երկուսով բազում ու մեծամեծ նախճիրներ էին գործում հաջողակ լինելով միաժամանակ ե՛ւ տեգ ու զենք գործածելիս, ե՛ւ ոտքով կամ երիվարով կռվելիս:*

*Այն ժամանակ, երբ Տուրուբերանին տիրող Սելիմ փաշան եկել էր իր իշխանության տակ առնելու Սասունը, եւ սասունցիք դիմադրում էին նրան՝ չկամենալով հանձն առնել հպատակվելու Սելիմին, երկու կողմերի ապստամբները տեւեցին մոտ 15 տարի, եւ Սբ Աղբերիկ վանքն այս մարտերում, որպես պորտ, հանդիսանում էր Սասունի ու Տուրուբերանի կենտրոնը:*

*Այս Սիմեոն վարդապետը, այլեւայլ կռիվների ու բազում վտանգների միջով անցնելով, լավագույնս մարտիրոսացել էր. նրա գրեթե ամբողջ մարմինը զարդարված էր սպիներով: Սիմեոն վարդապետը մեռավ 1855 թ.՝ խոր ծերության մեջ, իր բնիկ գավառի Բացի գյուղում, ուր եւ թաղվեց՝ Քաջարանց գյուղին մոտ, եւ ուր ցայսօր կենդանի է նրա դստերից ծնված տեր Մակար քահանան:*

*«Հնոց-նորոց», 1874 թ.*
*Գրաբարից փոխադրեց Ս. Ս.*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբուլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
17. 12. 2009 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**